243
9-61
digitised by A.R.A.R.@

զի երկոքին են՝ այսինքն մկրտութ
թիւնն շնորհէն զքաւութիւն և զմ
բառնան, ջնջեն և ներեն զմեղս մ
ծոյ գործոյն, այսինքն արդեան
րութեամբ մատակարարողին կամ
գոց․ որպէս էին խորհուրդք հնո
գործոյ գործեցելոյ, այսինքն արդ

digitised by A.R.A.R.@

5036-ալ

12004

ՈՒՆ

ՊՕԼՍՍԻ

ԱՐԵԱՆ ԱՊՈՒՉԵԽԵ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

5036
1475

# Գ Ի Ր Ք
## ԱՂՕԹԻՑ

ՎԱՍՆ ԱՄԵՆԱՅՆ
ՊԱՏԱՀԱՐԱՑ ՈՐՔ ԳԱՆ
Ի ՎԵՐԱՅ ՄԱՐԴՈՅ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ՏԵԱՌՆ
ՅԱԿՈԲԱՅ ԱՋԴԱՍԷՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՓԽԻՍ
1850
Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ
ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՉԵԽՑԻՈՅ

digitised by A.R.A.R.@

5036-տի

Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна

2789-71

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

# ԱՂՕԹՔ

## ԱՐԱՐԵԱԼ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

---

Հաւատով խոստովանիմ, և երկ-կրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա՛ քո արարածոց

digitised by A.R.A.R.@

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. Հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա՛ զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ՚ի հաճոյս, և ընդունել ՚ի քէն զխնդրուածս իմ. ողորմեա՛ ինձ բազմամեղիս։

Հա՛յր երկնաւոր տէր ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդի քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառա-

digitised by A.R.A.R.@

ջին զոր մերկացայ մեղօք · ողոր-
մեա՛ քո արար։

Որդի՛ այ ած ճշմարիտ՝ որ խո-
նարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ և
առեր մարմին 'ի սրբոյ կուսէն մա-
րիամայ վասն մերոյ փրկութե, խա-
չեցար և թաղեցար և յարեար 'ի
մեռելոց՝ և համբարձար փառօք
առ հայր, մեղայ յերկինս և առա-
ջի քո · յիշեա՛ զիս որպէս զաւա-
զակն՝ յորժամ գաս արքայութբ
քով · ողորմեա՛։

Հոգի՛ այ ած ճշմարիտ՝ որ ի-
ջեր 'ի Յորդանան և 'ի վերնատու-
նըն, և լուսաւորեցեր զիս մկըր-
տութե սուրբ աւազանին, մեղայ
յերկինս և առաջի քո · մաքրեա

digitised by A.R.A.R.@

զիս վերստին ա̃ծային հրով քո, որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. ողորմեա՛։

Անե՛ղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. ողորմեա՛։

Տեսօ՛ղ ամենայնի՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, գրեա՛ զանուն իմ ՚ի դպրութե̃ կենաց. ողորմեա՛։

Քննօ՛ղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութ̃ և անգիտութեամբ. Թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ՚ի ծնըն-

digitised by A.R.A.R.@

դենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո զգայարանօք իմովք , և իմ անդամօք մարմնոյս . ողորմեա՛ :

Ամենախնամ տէր՝ դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո որ ոչ ևս հայիլ յայրատ , և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան , և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն , և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութի , և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութի , և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութե . այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամի . ողոր:

digitised by A.R.A.R.@

Հո՛ւր կենդանի քո՝ զհո՛ւր սի-րոյ քո զոր արկեր յերկիր, բոր-բոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի ի-մում. ողորմեա՛:

Խնամատու՜ի հօր յո՝ տուր ինձ խնամատու՜ի, զբարիս խորհիլ և խօ-սիլ և գործել առաջի քո յամ-ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս. ողորմ:

Կամեցօ՛ղ բարեաց տէր կամա-րար՝ մի՛ թողուր զիս 'ի կամս ան-ձին իմոյ գնալ. այլ առաջնորդ-եա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց

digitised by A.R.A.R.@

քոց բարեսիրաց. ողորմեա՛։

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. ողորմ։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոց և մարմնոյ. ողորմեա՛։

Պահապա՛ն ամենի քո՝ աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տուէ, 'ի գիշերի. 'ի նստել 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի՛ երբէք սասա-

digitised by A.R.A.R.@

նեցայց. ողորմեա՛։

Աստուած իմ՝ որ բանաս ըզձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ ըզպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. ողորմեա՛։

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս ՚ի չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովորութիւն. և բեւեռեա՛ ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, և զսէր արքայութեանն, զի զղջացայց ՚ի մեղաց, և գործեցից արդարութիւն. ողորմեա՛։

digitised by A.R.A.R.@

Աղբիւր անմահութեան՝ աղ-բերացո՛ 'ի սրտէ իմմէ զարտա-սուս ապաշխարութեան որպէս պոռնկին . զի լուացից զմեղս ան-ձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս . ողորմեա։

Պարգեւիչ ողորմութեան՝ պար-գեւեա ինձ ուղղափառ հաւա-տով, եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդու-թեամբ գալ առ քեզ . ողորմեա։

Բարերար Այ՝ հրեշտակի բար-ւոյ յանձն արասցես զիս քաղց-րութբ աւանդել զհոգի իմ . անխռով անցուցանել ընդ չարու-թիւն այսոցն որ են 'ի ներքոյ երկ-նից . ողորմեա։

digitised by A.R.A.R.@

Լոյս ճշմարիտ քրիստոս՝ արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. ողորմեա։

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսել տուր ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. ողորմեա։

Ամենողորմ տէր՝ ողորմեա ամենայն հաւատացելոց 'ի քեզ,

digitised by A.R.A.R.@

իմոց և օտարաց, ծանօթից և ան-
ծանօթից, կենդանեաց և մեռե-
լոց․ շնորհեա՛ և թշնամեաց իմոց
և ատելեաց զթողութիւն որ առ
իս յանցանացն, և դարձո՛ զնոսա 'ի
չարեացն զոր ունին վասն իմ, զի
ողորմութեամբ քում արժանի եղի-
ցին․ ողորմեա՛։

Փառաւորեա՛լ տէր՝ ընկա՛լ զա-
ղաչանս ծառայիս քո, և կատար-
եա՛ 'ի բարի զխնդրուածս իմ՝ բա-
րեխօսութեամբ սրբուհւոյ աստ-
ուածածնին, և Յովհաննու Մկրտ-
չին, և սրբոյն Ստեփաննոսի նա-
խավկային, և սրբոյն Գրիգորի մե-
րոյ Լուսաւորչին, և սրբոց առա-
քելոց՝ մարգարէից՝ վարդապետ-

digitised by A.R.A.R.@

տաց՝ մարտիրոսաց, Հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անքակտելի սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

digitised by A.R.A.R.@

Աղօթք պահպանութեան։

Սնկիզբն ած՝ անեղ ած՝ ա-
նժամանակն ած՝ անպարագրելի ած՝
անծին ած՝ ամենազօրոյ ած՝ ամե-
նարարիչ ած՝ ամենակալին ած՝ ա-
մենագէտ ած՝ ամենակարող ած՝
ամենատես ած՝ ամենամեծ ած՝
ամենագթութ ած՝ ամենարդար ած՝

digitised by A.R.A.R.@

27389.Ա

ամենարձակ ա̃ծ՝ ամենայայց ա̃ծ՝
ամենայցելու աստուած՝ ամենազ
դու ա̃ծ՝ ամենազդիչ ա̃ծ՝ ամե-
նասաց ա̃ծ՝ ամենարթուն ա̃ծ ,
ամենաբաւ ա̃ծ՝ ամենաբարձրեալ ,
ա̃ծ՝ ամենաբերկրեալ ա̃ծ՝ ամե-
նաբաւ ա̃ծ՝ ամենաբաւական ա̃ծ՝
ամենաբարի ա̃ծ՝ ամենաբոյժ ա̃ծ՝
ամենաբուժիչ ա̃ծ՝ ամենաբուղխ
ա̃ծ՝ ամենաբաշխ ա̃ծ՝ ամենաբաշ
խօղ ա̃ծ , ամենագով ա̃ծ՝ ամենա
գովելի ա̃ծ՝ ամենագովեալ ա̃ծ՝ .
ամենագութ ա̃ծ՝ ամենագթած
ա̃ծ՝ ամենագտիչ ա̃ծ՝ ամենագանձ
ա̃ծ՝ ամենագորով ա̃ծ , ամենա-
դատ ա̃ծ՝ ամենադատաւոր ա̃ծ՝
ամենադաւանեալ ա̃ծ՝ ամենադիր

digitised by A.R.A.R.@

տ̃ծ՝ ամէ՛նադարման տ̃ծ՝ ամե՛նա-
դարմանից տ̃ծ, ամէ՛նաւեզերից տ̃ծ՝
ամէ՛նաւերբ տ̃ծ, ամէ՛նազօր տ̃ծ՝
ամե՛նազօրեղ տ̃ծ՝ ամե՛նադարդ
տ̃ծ՝ ամե՛նադարդարող տ̃ծ՝ ամե-
՛նադարդարից տ̃ծ՝ ամէ՛նագեղ տ̃ծ՝
ամէ՛նափրկիչ տ̃ծ, ամէ՛նաէն տ̃ծ՝
ամէ՛նաէակ տ̃ծ՝ ամէ՛նաերկինք տ̃ծ՝
ամէ՛նասուրբ տ̃ծ՝ ամէ՛նողորմ տ̃ծ՝
ամե՛նամեծ տ̃ծ, ամէ՛նամաքուր
տ̃ծ՝ ամե՛նաընարող տ̃ծ՝ ամե՛նաըն-
դու՛նակ տ̃ծ՝ ամե՛նաը՛նդունող տ̃ծ՝
ամե՛նաըղձումն տ̃ծ, ամե՛նաթագ-
տ̃ծ՝ ամե՛նաթագաւոր տ̃ծ, ամե-
՛նաժառանգ տ̃ծ, ամե՛նաիշխան
տ̃ծ՝ ամե՛նաիշխող տ̃ծ՝ ամե՛նաի-
մաստ տ̃ծ՝ ամե՛նախրատ տ̃ծ, ա-

digitised by A.R.A.R.@

մե՛նալոյս ա̃ծ , ամե՛նալիր ա̃ծ՝ ա֊
մե՛նալրումն ա̃ծ , ամե՛նախնամ ա̃ծ՝
ամե՛նախնամող ա̃ծ՝ ամե՛նախօս ա̃ծ՝
ամե՛նախրատ ա̃ծ՝ ամե՛նախորին ա̃ծ՝
ամէ՛նախորհուրդ ա̃ծ , ամէ՛նագը֊
թած ա̃ծ՝ ամէ՛նածագումն ա̃ծ՝
ամէ՛նագոլ ա̃ծ՝ ամե՛նածաւալ
ա̃ծ , ամե՛նակալ ա̃ծ՝ ամէ՛նակարող
ա̃ծ՝ ամէ՛նակիր ա̃ծ՝ ամէ՛նակրող
ա̃ծ՝ ամէ՛նակայծ ա̃ծ՝ ամէ՛նակա֊
տար ա̃ծ՝ ամե՛նակոչ ա̃ծ՝ ամե՛նա֊
կէտ ա̃ծ , ամէ՛նահաս ա̃ծ՝ ամէ՛նա
հասու ա̃ծ՝ ամե՛նահաստատ ա̃ծ՝
ամե՛նահաստատիչ ա̃ծ , ամե՛նաձիր
ա̃ծ՝ ամե՛նաձեռն ա̃ծ՝ ամե՛նաձե֊
ռ՛նատու ա̃ծ , ամե՛նաղեկավար ա̃ծ՝
ամե՛նազամբար ա̃ծ , ամե՛նաճարակ

digitised by A.R.A.R.@

ած՝ ամենաճառագայթ ած՝ ամե-
նաճշմարիտ ած , ամենամեծ ած՝
ամենամաքուր ած՝ ամենամաքրիչ
ած՝ ամենամարզ ած՝ ամենամար-
զիչ ած , ամենայար ած՝ ամենայա-
րոյց ած՝ ամենայառաջ ած՝ ամե-
նայորդոր ած՝ ամենայորդորիչ
ած՝ ամենայոյս ած՝ ամենակալ
ած՝ ամենալոյս ած , ամենաշարժ
ած՝ ամենաշուրջ ած՝ ամենաշահ
ած՝ ամենաշահաւոր ած՝ ամենա-
շէն ած , ամենողորմ ած՝ ամե-
նաուղորդ ած՝ ամենաուղիղ ած՝
ամենաուժեղ ած՝ ամենաուռոգ.
ած՝ ամենաուրէք ած՝ ամենագեա
ած՝ ամենաչափող ած , ամենա-
պատիւ ած՝ ամենապարզ և ած՝

digitised by A.R.A.R.@

ամե՛նաստատիչ ա̅ծ՝ ամե՛նապարզ ա̅ծ՝ ամե՛նապարգեւիչ ա̅ծ՝ ամե՛նապահ ա̅ծ՝ ամե՛նապահօղ ա̅ծ՝ ամե՛նապար ա̅ծ՝ ամե՛նապարզաբօղ ա̅ծ՝ ամե՛նապայծառ ա̅ծ՝ ամէ՛նապարոյր ա̅ծ, ամե՛նաջահ ա̅ծ՝ ամե՛նաջան ա̅ծ՝ ամե՛նաջամբ. ա̅ծ՝ ամե՛նալոյս ա̅ծ, ամէ՛նառատ ա̅ծ՝ ամե՛նառատացուցիչ ա̅ծ, ամե՛նասուրբ ա̅ծ՝ ամե՛նասրբիչ ա̅ծ՝ ամե՛նասահման ա̅ծ՝ ամե՛նասահմանիչ ա̅ծ՝ ամե՛նասանձ ա̅ծ՝ ամե՛նասանձօղ ա̅ծ՝ ամէ՛նասուփիռ ա̅ծ՝ ամե՛նասրբօղ ա̅ծ, ամէ՛նավարժիչ ա̅ծ՝ ամե՛նավարիչ ա̅ծ՝ ամե՛նավամբերիչ ա̅ծ՝ ամե՛նավայելուչ ա̅ծ, ամե՛նատուր ա̅ծ՝ ամե՛նատեսիչ ա̅ծ՝ ամե՛նատեղ ա̅ծ՝

digitised by A.R.A.R.@

ամե՛նատու ած՝ ամե՛նատուօղ ած՝
ամէ՛նատուն ած՝ ամէ՛նատօն ած՝
ամե՛նատես ած՝ ամե՛նատեսուչ
ած՝ ամե՛նատիւ ած, ամէ՛նարբուն
ած՝ ամե՛նարամից ած, ամէ՛նացօղ
ած՝ ամէ՛նացայտ ած՝ ամե՛նացայգ-
ած՝ ամէ՛նացնծութիւն ած՝ ամե-
՛նացանկ ած՝ ամէ՛նացանկալի ած,
ամէ՛նափառք ած՝ ամէ՛նափայլ ած՝
ամէ՛նափայլօղ ած՝ ամէ՛նափայլ-
եալ ած՝ ամէ՛նափայլէչ ած՝ ամէ-
՛նափոյթ ած՝ ամէ՛նափրկօղ ած՝
ամէ՛նափրկիչ ած, ամէ՛նաքաւ ած՝
ամէ՛նաքաւիչ ած՝ ամէ՛նաքարոզ
ած՝ ամէ՛նաքարոզիչ ած, անճառ
ած՝ անճառարքայ ած՝ անճառար
քայութիւն ած՝ անճառադատու-

digitised by A.R.A.R.@

թիւն ա՟ծ՝ անձառաղբիւր ա՟ծ՝
անձառաբարբիչ ա՟ծ՝ անձառապէ-
նիազ ա՟ծ՝ անձառափրկիչ ա՟ծ՝ ա-
մենաձառագայթ ա՟ծ՝ անձառա-
հաւոր ա՟ծ՝ անձառախոր ա՟ծ՝ ան-
ձառաբարձր ա՟ծ՝ անձառաբաց ա՟ծ՝
անձառաբուղխ ա՟ծ՝ անձառա-
գութ ա՟ծ՝ անձառազօր ա՟ծ՝ ան-
ձառախնամ ա՟ծ՝ անձառալուր ա՟ծ՝
անձառածագ ա՟ծ՝ անձառագով
ա՟ծ՝ անձառողորմ ա՟ծ՝ անձառա-
չափ ա՟ծ՝ անձառապատիւ ա՟ծ՝
անձառավէհ ա՟ծ՝ անձառափառք
ա՟ծ՝ անձառափայլ ա՟ծ, անախտ
ա՟ծ՝ անեղր ա՟ծ՝ անեղծ ա՟ծ՝ ան-
ըմբռնելի ա՟ծ՝ անժամանակ ա՟ծ՝
անիմանալի ա՟ծ՝ անլուելի ա՟ծ՝ ան-

digitised by A.R.A.R.@

խարդախ ած՝ անծայր ած՝ անկեղծ ած՝ անհասանելի ած՝ անղօղելի ած՝ անմեկնելի ած՝ անյիշաչար ած՝ աննինջ ած՝ անշարժ ած՝ անուխակալ ած՝ անչարչար ած՝ անպատմելի ած՝ անկոխելի ած՝ աննեղելի ած՝ անօրինակ ած։

Բարի ած՝ բարեմիտ ած՝ բարի բնութիւն ած՝ բարեաց բարի ած՝ բարեգութ ած՝ բարեբաշխ ած՝ բարեբարոյ ած՝ բարեխորհուրդ ած՝ բարեաց պարգեօղ ած՝ բարեսէր աստուած։

Գովեալ ած՝ գերիվերոյ ած՝ գերազարդ ած՝ գոհաբանեալ ած՝ գերապանծ ած՝ գեղեցիկ ած՝ գերագոյն ած՝ գոյացուցիչ ած։

digitised by A.R.A.R.@

Դատաւոր ած՝ դատաւորաց
դէտ ած՝ դիտապետ ած՝ դաստա-
ւորիչ ած՝ դաւանեալ ած՝ դասուց
վերինց ած՝ դեղ կենաց ած՝ դը-
րախտ ած՝ դաստիարակող ած։

Երրորդութիւն ած՝ երկինք
աստուած՝ երկնաւորաց աստուած՝
երկրաւորաց աստուած։

Զօրաւոր ած՝ զօրեղ ած՝ զու-
արթնոց ած՝ զարդարող ած՝ զար
մանք ած՝ զարմանալի ած՝ զար-
հուրելի աստուած։

Երրեակ և մի ած՝ էականեալ
ած՝ էական ած՝ էացուցիչ ած՝
էութիւն աստուած։

Թագաւորաց ած՝ թաքեալ ած՝
Թողիչ մեղաց ած՝ թաղելոց յարու

digitised by A.R.A.R.@

թիւն ած՝ թշնամեաց սատակիչ ած:

Ժառանգութի ած՝ ժամանեալ ած՝ ժամանող ած՝ ժամանակաց աստուած:

Իսկզբանէ ած՝ ինքնակամ ած՝ ինքնագոյ ած՝ ինքնակալ ած՝ ինքնատուր ած՝ ինքնակարող ած՝ ինքնիշխան ած՝ իշխող ած՝ ՚ի բարձունս ած՝ իմանալի աստուած:

Լոյս ած՝ լոյս անստուեր ած՝ լոյս թափանցիկ ած՝ լուսազգեստ ած՝ լուսաւորիչ ած՝ լուսաղբիւր ած՝ լուսատու ած՝ լուսաճեմ ած՝ լսող ած՝ լիութիւն ած՝ լըցուցիչ աստուած:

Խոր անքննին ած՝ խաղաղութիւն ած՝ խաղաղարար ած՝ խնա-

մօղ ած՝ խնամիչ ած՝ խրատիչ
ած՝ խանդաղատօղ ած՝ խորհուրդ-
ած՝ խորհրդապետ ած՝ խնդրուած
ած՝ խորհրդադէտ ած՝ խնդրօղ
ած՝ խոնարհ ստուած՝ խորհր-
դադէտ ստուած:

Ծագումն ած՝ ծնօղ ած՝ ծա-
ղօղ ած՝ ծարաւելոց ած՝ ծանուց
եալ ած՝ ծանուցիչ ած՝ ծառայից
տէր ած՝ ծածկատես ած՝ ծածկա-
գէտ ստուած՝ ծայր ստուած:

Կենդանի ած՝ կենդանարար
ած՝ կենդանատու ած՝ կենդանա
ցուցիչ ած՝ կերակրօղ ած՝ կամա-
րար ած՝ կեանք ած՝ կամեցօղ
բարեաց ած՝ կենդանի ած՝ կա-
տարեալ ած՝ կառավարօղ ած՝

digitised by A.R.A.R.@

կուրաց լուսատու աստուած:

Հայր ած՝ Հօր որդի ած՝ Հո-
գի սուրբ ած՝ Հաւատ ած՝ Հա-
մերց լեզուատու ած՝ Հոգւոց ա-
զատիչ ած՝ Հրածորան ած՝ Հրա-
ւիրօղ ած՝ Հինաւուրց ած՝ Հա-
րուստ ած՝ Հանուրց ած՝ Հաւա-
տարիմ աստուած:

Ձայն ած՝ Ձայնօղ ած՝ Ձե-
ռնտու ած՝ Ձայնից լսօղ ած՝ Ձիր
ած՝ Ձիրաբաշխ աստուած:

Ղեկավար ած՝ ղեկապետ ած՝
ղամփար աստուած:

Ճշմարիտ ած՝ Ճշմարտութիւն
ած՝ Ճշմարտասէր ած՝ Ճարտարա-
պետ ած՝ Ճառագայթ ած՝ Ճա-
ռագայթեալ ած՝ Ճոխ ած՝ Ճա-

digitised by A.R.A.R.@

չափ ած՝ ճար ած՝ ճառ ով ած՝ ճանապարհ ած՝ ճանապարհ կե-նաց ած՝ ճանապարհ բարեաց ած՝ ճառ աստուած:

Մեծարեալ ած՝ մեծապատիւ ած՝ մաքրիչ ած՝ մաքրու թի ած՝ մաքրող ած՝ մահու լուծանող ած՝ մեղաւորաց դարձ ած:

Յայտնու թիւն ած՝ յաւիտեան ած՝ յաւիտենից ած՝ յարու թիւն ած՝ յուսացելոց ած՝ յուսադրող ած՝ յարուցիչ ած՝ յառաջ ած՝ յանդիման աստուած:

Նեղելոց լոյս ած՝ նորահրաշ ած՝ նաւապետ բարի աստուած:

Շնորհ ած՝ շնորհատու ած՝ շուրջ ած՝ շուրջանակի ած՝ շնոր-

digitised by A.R.A.R.@

հող աստուած՝ շնորհաբերի աստ-
ուած՝ շաւիղ աստուած։

Ողորմած ա՟ծ՝ ողորմութ՟ի ա՟ծ՝ ուղիղ ա՟ծ՝ ուղղորդ ա՟ծ՝ ուղղոր դանէր ա՟ծ՝ ուղղորդապետ ա՟ծ՝ ուղղորդախօս աստուած՝ ուղղոր դարան աստուած։

Չարատեաց ա՟ծ՝ չարասատ ա՟ծ՝ չարամերժ ա՟ծ՝ չարաբարձ ա՟ծ՝ չարահերձ աստուած՝ չա-
րակործան աստուած։

Պահապան ա՟ծ՝ պահպանիչ ա՟ծ՝ պետ ա՟ծ՝ պետական ա՟ծ՝ պատուե-
լի ա՟ծ՝ պարունակօղ աստուած։

Ջահ ա՟ծ՝ ջահալոյս ա՟ծ՝ ջա-
հապայծառ ա՟ծ՝ ջան ա՟ծ՝ ջամբօղ ա՟ծ՝ ջերմեռանդութ՟ն ա՟ծ։

digitised by A.R.A.R.@

Ռահ ած՝ ռահ լոյս ած՝ ռա-տարաշխ ած՝ ռստափայլ ած՝ ռե-ային քաղցր ած՝ ռահավարժ ած։

Սուրբ ած՝ սրբութիւն ած՝ սրբաւող ած՝ սէր ած՝ սիրելի ած՝ սահմանադիր ած՝ ստեղծօղ ած՝ սրբոց ած՝ սոսկալի ած։

Վեհ ած՝ վեհագոյն ած՝ վայել-չութիւն ած՝ վերակացու աստ-ուած՝ վարժիչ աստուած։

Տէր ած՝ տեսօղ ած՝ տիւ ած՝ տուիչ բարեաց ած՝ տրամեցելոց ած։

Րաբունի աստուած՝ րաբունա-պետ ած՝ րախարար աստուած։

Ցնծութիւն ած՝ ցանկալի ած՝ ցաւոց բժիշկ ած՝ ցօղահոս ած։

Փառք ած՝ փառաւորեալ ած՝

digitised by A.R.A.R.@

փառահեղ պատուած՝ փառաբանեալ պատուած՝ փրկիչ պատուած՝ փրկօղ պատուած՝ փարթամ ա՟ծ՝ փարատիչ ցաւոց պատուած՝ փառաւոր անտուած՝ փառք ՚ի բարձունս պատուած։

Քահանայապետ պատուած՝ քերովբէանիստ պատուած՝ քաւիչ պատուած՝ քաւութ՟ի պատուած՝ քաւարան պատուած՝ քարոզիչ պատուած՝ քննօղ պատուած։

Օրէնք պատուած՝ օրինադիր պատուած՝ օրհնիչ պատուած՝ օրհնեալ ա՟ծ՝ օրհնաբանեալ ա՟ծ։

Քո սուրբ և ահեղ անուանցդ զօրութեամբ՝ տէր ա՟ծ ամենակալ եղիցի պահապան ծառայիս։

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Աղօթք վասն կապանաց դիւաց և կախարդաց աղանդաւորաց։

Թագաւոր հզօր ապաւէն ծարաւելոց՝ փրկիչ նեղելոց՝ որ վասն մեր խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ. վասն մերոյ փրկութեան մատնեցար, ըմբռնեցար, չարչարեցար, խաչեցար, թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր։ Զարթի՛ր զզօրութիւն քո և եկ 'ի կեցուցանել զգինս արեան քոյ տէր. և մի՛ տար գերել սատանայի

digitised by A.R.A.R.@

զքո փրկեալքս, և մի՛ տար բնա-կութի չարին՝ զտաճար անուանդ քում սրբոյ. այլ գթա՛ 'ի քո արարածս արարչական սիրով քո, և ողորմեա՛ մեզ, զի 'ի խաչ քո պարծելով պարծեցաք. և փրկեա՛ զմեզ յաներևոյթ չար դժնդակ դիւաց, և 'ի խաբեբայ եղեռնական գործոց կախարդաց. և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Զոր իշխանքն հայածին, որք ընդ ծառայս քո մարտնչին. երևելով նշան խաչին, աներևոյթքն կործանեսցին։

digitised by A.R.A.R.@

## Սուրբ աւետարանն՝ որ ըստ Մատթէոսի։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ եւ ասէին. ողորմեա՛ց մեզ որդի՛ Դաւթի։ Եւ իբրեւ եկն ՚ի տուն, մատեա՛ն առ նա կոյրքն. եւ ասէ ցնոսա Յս՟. հաւատա՞յք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո՞ տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ եւ ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. եւ սաստեաց նոցա Յիսուս՝

digitised by A.R.A.R.@

և ասէ․ զգո՛յշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ա՟մ երկիրն ընդայն։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն․ և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն․ թէ և ո՛չ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։

---

Սուրբ աւետարանն՝ որ ըստ Մարկոսի։

Եւ ել լուր նորա ընդ ա՟մ կողմն Գալիլեացւոց։ Եւ վաղվաղակի ել-

digitised by A.R.A.R.@

եալ 'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն Սիմոնի և Անդրէայ՝ Յակոբաւ և Յովհաննու հանդերձ։ Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղ վաղակի ասեն ցնա վասն նորա։ Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալ-եալ զձեռանէ նր՟, և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնս՟։ Եւ իբրև երեկոյ եղև 'ի մտանել արեգա-կանն, բերէին առ նա զամ՟ հի-ւանդս և զդիւահարս. և էր ամ՟ քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս 'ի պէս պէս ախտից, և դևս բա-զումս եհան. և ոչ տայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

digitised by A.R.A.R.@

Սուրբ աւետարանս՝ որ ըստ Ղուկասու։

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 'ի լեառն կալ յաղօթըս, և հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն աստուծոյ։ Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս. զորս և առաքեալս անուանեաց։ Զսիմոն՝ զոր և Պետրոս անուանեաց, և զԱնդրէաս զեղբայր նորին, և զՅակովբոս և զՅովհաննէս, և զՓիլիպպոս և ըզ Բարդուղիմէոս. և զՄատթէոս և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զՍիմոն զկոչեցեալն Նա-

digitised by A.R.A.R.@

խանձայոյզ . և զՅուդայ Յակով-
բայ , և զՅուդայ Իսկարիովտացի՝
որ եղև իսկ մատնիչ։ Եւ իջեալ
Նորօք հանդերձ 'ի տեղի մի տափա-
րակ . և ժողով աշակերտացն Նորա՝
և բազմութիւն յոյժ ժողովրդեանն ,
յամ Հրէաստանէ և Յերուսաղէ-
մէ՝ և յայնմ կողմանէ՝ և 'ի ծովե-
զերէն Տիւրոսի և Սիդոնի . որ
եկին լսել 'ի Նմանէ՝ և բժշկել 'ի
հիւանդութեէ իւրեանց . և նեղ-
եալքն յայսոց պղծոց բժշկէին։
Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր
մերձենալ 'ի Նա , զի զօրութիւն
բազում ելանէր 'ի Նմանէ՝ և բը-
ժշկէր զամենեսին։

digitised by A.R.A.R.@

## Սուրբ աւետարան՝ որ ըստ Յովհաննու։

Յետ այսորիկ տօն էր Հրէից. և ել Յիսուս Յերուսաղէմ։ Եւ էր Յերուսաղէմ ՚ի Պրոպատիկէ աւազանին. որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանին՝ և յուզէր զջուրսն. և որ նախ ՚ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ո՛չ ունելով նշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր

digitised by A.R.A.R.@

մի , որոյ երեսուն և ութ ամ էր ՚ի հիւանդութեան իւրում։ Զնա իբրև ետես Յիսուս՝ զի անկեալ դնէր , և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետև , ասէ ցնա ․ կամիս ողջ լինել ։ Պատասխանի ետ նմա հիւանդն ․ տէ՛ր՝ ո՛չ զոք ունիմ , թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանին ․ և մինչ ես դանդաղիմ , այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ ։ Ասէ ցնա Յիսուս ․ արի՛ ա՛ռ զմահիճս քո՝ և գնա՛ ։ Եւ ողջացաւ այրն , և յարեաւ՝ առ զմահիճս իւր՝ և շրջէր ․ և էր շաբաթ յաւուրն յայնմիկ ։

digitised by A.R.A.R.@

## Պատմութիւն վարուց՝ ընդ նմին և աղօթք Կիպրիանոսի հայրապետին։

Ես Կիպրիանոս ծառայ այ՝ յԱնտիոք քաղաքէ՝ ազգաւ Հելենացի առն հեթանոսի որդի, անուն հօր իմոյ Եդեսիա, և մօր իմոյ Կղօդիա։ Յորժամ ծնայ ես յորովայնէ մօր իմոյ, ծնօղքն իմ նուիրեցին զիս յուսումն չարաւածոց՝ լինիլ պաշտօնեայ կռոցն. և ետուն զիս յուսումն դիւաթեան, և զամ ուսայ զկախարդական գիրս առաւել քան զՍիմոն և զՆաւքովկր, և եղէ հասու ամ

digitised by A.R.A.R.@

հնարագիտութ՟ցն · բազում ան-
գամ ելանէի 'ի յօդն և կախար-
դութ՟ք դնայի 'ի վերայ ծովուն · և
էին 'ի հրամանս իմ ա՟մ գունդք
դիւաց · և զոր ինչ խորհէի, առ-
ժամայն կատարէին վաղվաղակի:

Ելանէի յապարանսն և առնէի
զշաւիղս արեգականն և զլուսին յե-
րեսս իմ, և երեսք իմ փայլէին
իբրև զարեգակն, և կատարէի ըզ
կամս դիւացն մեծաւ ուրախու-
թ՟ք, և էի մոլորեալ 'ի գործս չա-
րութեան և ո՛չ ճանաչէի զա՟ծ, և
զամենեսեան դայթակղեցուցա-
նէի յաղագս չար արուեստին իմոյ:

Զոմանս աչաց ցաւ առնէի ·
զոմանս գլխացաւ առնէի · զոմանս

digitised by A.R.A.R.@

քամոտ առնէի . զոմանս ջերմոտ
առնէի . զոմանս հիւանդ առնէի .
զոմանս յազգազգ վարէի . զոմանց
զգոյն յերեսացն առնէի . զոմանց
զմիտքն մոլորեցուցանէի . զոմանս
սատակ առնէի իւր ազգին: Զայր
եւ զկին կռուեցնէի եւ ատել տայի
զմիմեանս , եւ այլ բազում չարիս
դիւականս առնէի 'ի վերայ երկրի:

Եւ այնչափ հմուտ եղէ դի-
ւացն՝ որ ո՛չ միայն գործ եւ ո՛չ
խորհուրդ զոր ես ո՛չ գիտացի .
գիտացի եւ զբազմութիւն դիւաց զի
որպէս ջուր որ ելանէ յաղբերացն ,
այնպէս ելանէին դեւքն եւ պատրէին
եւ խաբէին զորդիս մարդկան . զոր
տէր ա̃ծ հեռացուսցէ 'ի ծառայէս

digitised by A.R.A.R.@

աստուծոյ։

Եւ կապէի կախարդուբ̃ խմով զերկինս՝ որ ո՛չ տայր զանձրև · զերկիր՝ որ ո՛չ բուսուցանէր ըզ-ստերմանիս իւր · զարեգակն և ըզ-լուսինն և զաստեղս հաստատու-թե̃ · զծառս՝ որ ո՛չ տայր պտուղս իւր · զծով՝ որ ո՛չ տայր զալիս իւր · զձկունս՝ որ ո՛չ լողային ՚ի ծովս · զգետս՝ որ ոչ գնային · զաղբիւրս՝ որ ո՛չ բղխէին · զթռ-չունս՝ որ ո՛չ վերանային յօդս · զանասունս՝ որ ո՛չ յղանային · ըզ յղիս՝ որ ո՛չ ծնանէին · զկանայս՝ որ ո՛չ յղանային · զեռունս՝ որ ո՛չ զեռային · զվաստակաւորս՝ որ ո՛չ վաստակէին · զվաճառականս՝ որ

digitised by A.R.A.R.@

ո՛չ վաճառեցին։ Զօդն՝ որ ո՛չ թըն
դայր, և կապէի զերկինս օդօքն
և զերկիր ա՟մ զեռնոք, որ ո՛չ ան-
ցանէին ընդ հրամանս իմ. ուձհբ.
աղանդք կանանց և կախարդաց,
և արանց աղանդաւորաց։

Արձակ երիտասարդ մի որոյ
անունն Ագղաւլդոս՝ գեղեցիկ
կուսի մի ցանկացաւ որոյ անունն
էր Յուստինէ, առնուլ զնա 'ի
կնութի և ո՛չ կարէր, և առաքեաց
բազում պատուական ինչս՝ ոսկի
և արծաթ և գեղեցիկ հանդերձս.
և կոյսն ո՛չ հաւանեցաւ և դար-
ձոյց անարգանօք. և առեալ երի-
տասարդն զա՟մ ինչսն գնաց առ
Կիպրիանոս. և նա ասէ՝ ես դար-

digitised by A.R.A.R.@

ձուցանէմ զնա 'ի կամս քո, և ա-
ռաքեաց զմի 'ի դիւացն առ Յուս-
տինէ, և նա սուրբ աղօթիւքն
հալածեաց զնա, և ապա առաք-
եաց զդէն պոռնկուն, և եղեալ
դիւին 'ի կերպարանս ծեր և պա-
ռաւ կնոջ, և գնացեալ 'ի դուռն
սուրբ կուսին 'ի գիշերի և ասէ՝
ով դուստրիկ իմ՝ զգիշերս ընդ-
քեզ աղօթեցից, և մտեալ դէն
առ կոյսն, աղօթեցին զողջ գիշերն
միաբան։

Եւ ապա ասէ սատանայ՝ ով
դուստրակ 'ի կուսութենէ ո՞վ է
վարձս ընկալեալ։ Եւա թէ չէր
ամուսնացեալ, ուստի՞ էին նախա-
հարքն՝ մարգարէքն՝ առաքեալք

digitised by A.R.A.R.@

-քըն՝ հայրապետաքն. ե՛կ երթիցուք առ մեծն Կիպրիանոս և ամուսնացի՛ր. և ապա իմացեալ կոյսն որ սատանայական էր բանն, եհան զնշան խաչին 'ի վերայ մարմնոյ իւրոյ և կնքեաց զինքն. և դեւն հալածեցաւ և աներեւոյթ եղև ահիւ և դողութ և գնաց առ Կիպրիանոս։

Եւ Կիպրիանոս ասէ ցդեւն՝ զի՞նչ է որ երկիւղիւ դողաս և սասանիս. ասէ դեւն, տեսի զնշան խաչին և երկիւղիւ դողամ և սասանիմ. ասէ Կիպրիանոս՝ զի՞նչ է նշան խաչին որ զարհուրեցուցանէ զքեզ։ Ասէ դեւն՝ ցԿիպրիանոս. երդուի՛ր որ ո՛չ ուրանաս զմեզ, ես ասեմ քեզ զամ խոր-

digitised by A.R.A.R.@

Հուրդս մեր և զնշան խաչին. և
երդուաւ Կիպրիանոս 'ի սուտ և 'ի
մնոտի պաշտամունս նոցա՝ եթէ
ո՛չ ուրանամ զձեզ։ Եւ սկսաւ
դևն պատմել մի ըստ միոջէ զա՟մ
և ասէ. ա՟ծ զմարդն ստեղծ 'ի հո-
ղոյ զԱդամ, և ասաց եկա՛յք հրեշ-
տակք և հրեշտակապետք երկի՛ր
պագէք ձեռագործին իմոյ Ադա-
մայ. նա դասքն սադայէլի հպար-
տացան, և ո՛չ խոնարհեցան երկիր
պագանել Ադամայ. բարկացաւ
ա՟ծութ՟ին և զերկինքն պատառ-
եաց և զսադայէլի դասն 'ի վայր
ելից զանթիւ զօրս մեր. և շինե-
ցաք ապարանս և դժոխք անուա-
նեցաք, և զհոգիս արդարոց և մե-

digitised by A.R.A.R.@

ղաւորաց մինչև ցՅովհաննէս Մը-
կրտիչն զն՟մ ըմբռնեցաք և'ի դը-
ժոխս ածաք։ Յետոյ առաքեաց
ա՟ծ զորդին իւր միածին որ եկն և
ծնաւ 'ի սուրբ կուսէն Մարիամայ
ա՟ծածնէն, զմեռեալս յարոյց. ըղ-
բորոտս սրբեաց. զկաղս գնացոյց.
զկոյրս լուսաւորեաց. և այլ բա-
զում սքանչելիս արար։ Մատնե-
ցաւ 'ի Յուդայէ և խաչեցաւ 'ի
Հրէից և թաղեցաւ, և յարեաւ
'ի մեռելոց, և խաչիւն իւրով ըզ-
դժոխս աւերեաց. և համբարձաւ
առ հայր յերկինս, և գալոց է մի-
անգամ դատել զկենդանիս և ըզ-
մեռեալս. և խաչիւն իւրով լու-
սաւորէ զն՟մ արարած։ Հաւա-

digitised by A.R.A.R.@

տացեալքն ուրախանան և ուրա-
ցօղքն կոծեսցին: Այս է Նշան
խաչին զոր տեսանեմք և զարհու-
րիմք և սոսկամք. և ապա Կիւրի-
անոս 'ի միտս իւր եկեալ ասէ,
Թէ Նշան խաչին այդչափ զօրու-
Թիւն ունի, ապա խաչեալն որչափ
ևս առաւել: Ես հաւատամ 'ի
Քրիստոս, և 'ի զօրուԹի խաչին,
և յած հայր ամենակալ` զի նա
միայն է ճշմարիտ ած, և կուռքն
դևքն են և սատանայ:

Եւ ապա այրեաց զամ գիրս
կախարդուԹե իւրոյ, և գնաց առ
եպիսկոպոս քաղաքին, և մկրտե-
ցաւ և ձեռնադրեցաւ քահանայ,
և զկնի աւուրց` եպիսկոպոս. և

digitised by A.R.A.R.@

աղօթեաց և ասէ՝ տէ՛ր ա̃ծ իմ սիրեցի զքեզ և ծանեայ 'ի ձեռն սուրբ Հայրապետին Մատթէոսի և Յուստիանէ կուսին զզօրութի̃ խաչի քո , ո՛ղորմած ա̃ծ ողորմեա՛ ինձ որպէս Աւազակին . քաւեա՛ զիս որպէս զՋաքէոսն . արդարացո՛ զիս որպէս զՄաքսաւորն . հա՛ն զիս 'ի գբոյ մեղաց՝ որպէս զԵրեմիա և զԴանիէլ 'ի գբոյ բանտին . շիջո՛ յինէն զբռնութի̃ թշնամւոյն՝ ո՜վ զհուրն երից մանկանց 'ի Բաբելոնի հողմաբեր ցօղո̃վն օրհնութե̃ :

Եւ զոր յառաջն կապէի չար և դիւական աղանդօք , այժմ արձակեալ եմ զա̃մ կապեալսն հրամանաւն ա̃յ . կացցեն երկինք և

digitised by A.R.A.R.@

երկիր 'ի հաստատուն խորհանց ․ հող՝ զքոյս դալար բուսուցանէ ․ ծառք՝ զպտուղս խորհանց տան ․ և ամ կապեալքն՝ արձակումն առցեն յանուն ամենասուրբ Երրորդութեանն աստուծոյ։

Երդմնեցուցանեմ զքեզ սատանայ՝ անուամբն այ Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ ․ և 'ի հազար և մէկ անուննն աստուծոյ՝ որ զԱդամն և զԵւա բաղկացոյց ․ և յիննն դասս հրեշտակացն՝ որ եղանեն և իջանեն 'ի Ապրիկօղա քաղաքն ․ և յանուն Սերովբէիցն՝ որ կան 'ի սպասաւորուի որդւոյն այ, և Թևաւքօղելով ծածկեն զերեսս խորհանց և երգեն, սուրբ՝

digitised by A.R.A.R.@

սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց՝ լի են երկինք և երկիր փառօք քո։

Երդմնեցուցանեմ զձեզ՝ չար դևք և որդիք սատանայի՝ որ էք օգնական ամ̃ կախարդաց և չարագործաց. երդմնեցուցանեմ ըզձեզ սատանայք՝ ՚ի գեղեցկութիւն Ադամայ. ՚ի վայելչութիւն դրախտին. ՚ի խոնարհութիւն ամ̃ սրբոց. և ՚ի սէր ամ̃ մարտիրոսացն. ՚ի պատարագն Աբելի. ՚ի կոչումն զանուն տեառն Ենովսայ. ՚ի յարդարութիւն Նոյի. ՚ի քահանայութիւն Մելքիսեդեկի. ՚ի հաւատս և ՚ի հիւրընկալութիւն Աբրահամու. ՚ի կատարման Սահակայ. ՚ի պատարանն Յակոբայ. ՚ի գեղեցկութիւն Յով-

digitised by A.R.A.R.@

եփայ. 'ի համբարձումն Եղիայի. 'ի հնազանդութիւնն Եղիսէի. 'ի տախտակն Մովսէսի. 'ի պատմուճանն Ահարօնի, որ զարդարեալ էր երկոտասան ակամբք՝ որ օրինակ էր երկոտասան առաքելոցն Քրիստոսի. 'ի քնարն և 'ի սաղմոսն Դաւթի. 'ի մատանիսն Սողոմոնի. 'ի գաւազանն Մովսէսի, և յաղօթսն Ահարոնի. յաւետիքն Գաբրիէլի՝ զոր ետ սուրբ կուսին Մարիամու. 'ի ծնունդն և 'ի մկրտութիւնն Յիսուսի Քրիստոսի՝ որ մկրտեցաւ 'ի Յորդանան 'ի Յովհաննէ. և 'ի սուրբ հրամանքն որ հրամայեաց առաքելոցն իւր թէ՝ արի՛ առ զմահիճս քո. և 'ի թուքն

որ եբաց զաչս կուրի՛ն. և 'ի գա-
լուստն յաւանա՛կաւ Յերուսա-
ղէմ. 'ի յարութի՛ն Ղազարու. 'ի
մատնութի՛ւնն և 'ի խաչելութի՛ն
Քրիստոսի. 'ի գեղարդն և 'ի թե-
ւեռն Քրիստոսի. 'ի փշեղէ՛ն պսակն
և 'ի հեղումն արեան որդւոյն քո՛յ
որ հեղաւ 'ի վերայ սուրբ խաչին։

Երդմնեցուցանեմ և կապեմ
և հալածեմ զձեզ չար դևք՝ յա-
րութե՛ն և համբարձմամբն Քսի,
և 'ի գալստեամբն հոգւոյն սրբոյ,
և այլակերպութե՛ն Քրիստոսի՝ որ
այլակերպեցաւ 'ի Թաբօր լերի՛ն.
ո՛չ ունիք իշխանութի՛ դևք և ա-
ղանդք և կախարդութիք արանց և
կանանց մերձենալ 'ի ծառայս քո՛յ։

digitised by A.R.A.R.@

Երդմնեցուցանեմ զքեզ ՚ի բանն անծախելի, ՚ի լոյսն անճառելի. ՚ի Թագն անպատմելի, ՚ի Թագաւորն սոսկալի. ՚ի մատանին Սողոմոնի. ՚ի տախտակն Մովսէսի. ՚ի յաղօթս Ահարօնի. ՚ի քառասնօրեայ պահս Մովսէսի. ՚ի սուրբ արիւնն մանկանց Բեթլեհեմի. ՚ի յարդարութիւն Նոյի. ՚ի հաւատսն Ղովտի. ՚ի կարգն Մելքիսեդեկի. ՚ի յաւետիսն Գաբրիէլի. ՚ի յաթոռն չորեք կուսի. մինն մարդոյ էր նմանի և իմաստուն բանականի. մինն կերպ էր Առիւծի, տեսին հուր կիզելի. մինն ահեղ և զքանչելի, տեսին հրեղէն Եզինունի. միւսն թև Արծուի, ահեղ

անսիլ զարմանալի , որ 'ի վերայ նստեալ բազմի անդ և աստուած ամենայնի:

Ուր այս անուանքս սուրբ յիշեսցին՝ գիրս և հրամանս պատահի , չարն 'ի բաց միշտ հալածի , կապք և աղանդք լուծանին 'ի ծառայէս աստուծոյ:

Տուր մեզ տէր զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տուր մեզ:

Որպէս զի մեծ են գործք քո տէր և յոյժ խոր են խորհուրդք քո:

digitised by A.R.A.R.@

Աղօթք սրբոյն Բարսղի Հայրապետին՝ վասն դիւահարաց։

Աստուած ա͞ծոց և տէր տե-րանց՝ արարիչ աննիւթական զօ-րաց հրեղինաց, և ա͞մ երկնայնոց և երկրայնոց արուեստագործ։

Դու ես՝ որ զապստամբն ա-ռաջին զվտարանջեալն 'ի քումմէ սպասաւորութենէ՝ յերկիր կործա-նեցեր. և զհրեշտակս յանցուց-եալս՝ զհաղորդակիցս ապստամբու-թեան նորա, յանդունդս խաւա-րի առաքեցեր։

digitised by A.R.A.R.@

Դու ահաւոր ես, և ո՛վ կարէ
կալ առաջի քո. 'ի քէն դողան ա՟մ
արարածք երկնայինք և երկրա
ւորք, և յահէ փառաց զօրութե՟
քո սասանին։

Սատանեա՛ն իշխանին չարութեան
և ա՟մ բանակի նորա, որք անկան
ընդ նմա 'ի լուսեղէն յարկացն
վերին. որպէս զի զարհուրեսցի
յերդմանէս յայսմանէ՝ զոր երդ
մնեցուցանեմ յանուն քո, և փա
խիցէ յանհուն հեռաստան ան
դառնալի գնացիւք։

Հրամայեա՛ սմա և զօրաց սո
րին 'ի բա՛ց մեկնիլ 'ի ծառայէս
յայսմանէ. և խաղաղ հալածեա՛
զնոսա, զի մի՛ վնասեսցեն կնքեալ

digitised by A.R.A.R.@

պատկերի քո ․ այլ հզօրեալքս այ-
սոքիկ զօրացեալ ահաւոր անուամբ
քով սրբով, կոխեսցեն զօձս և ըզ
կարիճս և զամենայն զօրութիւնս
թշնամւոյն։

Որպէս զի յա՛մ բերանոյ օրհ-
նեսցի և գովեսցի և փառաւո-
րեսցի ամենապատուրբ անուն Հօր և
որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից , ամէն։

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Աղօթք երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ ասացեալ առ սուրբ Ածածինն։

Աստուածածին մայր Քրիստոսի և ծնող միածնի Հօր, բարձող անիծից՝ և պարծանք ազգի մարդկան։ Յերկնային զօրացն երանեալ և հոգեղինացս օրհնաբանեալ. միջնորդ այ և մարդկան. հաշտարար ընդ արարածս. Թագ և պսակ կուսից և համարձակ բարեխօս վասն մեղաւորաց։

Մեղուցեալս ամենայնի՝ անկանիմ առաջի քո, և աղաչեմ ըզքեզ՝ իբրև զնոյն ինքն զմարմնոյ

digitised by A.R.A.R.@

եալն 'ի քէն, բարեխօսեա՛ վասն իմ առ բանն ա՟ծ՝ զոր ծնար մարմնով, զոր կերակրեցեր զկերակրիչն ամենայն կենդանեաց։

Աղաչեմ վասն մեր զանդրանիկդ քո. կա՛ց կանգուն առաջի նորա ցուցմամբ սուրբ ստեանցդ. կացո՛ առաջի նորա միջնորդ և բարեխօս զմանկունս իւր։ Զ կաթամբ ստանիլն որպէս մանուկ. զուսոյդ բառնիլն. զգրկօք գրդուելն. զշրթամբք համբուրելն. զողջագուրելն որպէս որդւոյ. զերթ և զեկն քո ընդ նմա Յեգիպտոս՝ և 'ի Նազարէթ և յա՟մ անդր. զպատմութ՟ք տագնապին քո վասն նորա 'ի ժամ չարչարանացն. ըղ-

digitised by A.R.A.R.@

յանձնարարութի՟ քո առ Յովհան-
նէս , յորժամ հեղուսեալ կայր
վիմօք 'ի վերայ խաչին։ Զդառն
արտասուսն քո՝ զոր վտակօրէն
հեղուիր՝ յորժամ տեսանէիր զնա
վտանգեալ 'ի վերայ խաչին . վասն
որոյ մանանատատան տառապէիր
կսկծակոծ՝ վասն չարչարանացն ,
վասն սաստիկ ծարաւմանն , վասն
ճաշակման լեղւոյն՝ քացախին ,
վասն տեսանելոյն զքրտնասեսակ
արեան իջումն , վասն իջուցանե-
լոյն 'ի խաչէն արիւնաւանգ մարմ-
նոյն , վասն դիազարդեալ դնելոյն
'ի սուրբ գերեզմանն։

Աղաչեմ զքեզ մայր լուսոյ ,
հայցեմ զթողութի՟ մեղաւորիս։

digitised by A.R.A.R.@

Դի՛ր աղէրս առաջի՛ նորա զա-
մենակիրս չարչարանաց իւրոց , զոր
վասն իմ կրեաց բարերարն և մար
դասէրն։ Յիշեցո՛ սուրբ կոյս՝ զայս
քան չարչարանացն . զի Թերևս
ողորմեսցի և ներեսցէ բազմամե-
ղիս , և ջնջեսցէ զձեռագիր իմոց
յանցանաց։ Եւ իւր անմեղ մա-
տամբն և սուրբ արեամբն դրոշ-
մեսցէ զգերեալս՝ 'ի դպրութիւն
կենացն անվախճանից ընդ ամենայն
սուրբս իւր։ Եւ քեզ աղէրս 'ի
մեղուցեալ ոգւոյս՝ ամենասուրբ
կոյս բարեխօս լեր ծառայիս իմ։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

## Աղօթ Մեսրոպայ վարդապետին՝ վասն ճանապարհի:

Առաջնո՛րդ կենաց և ճանապարհ ճշմարտութեան տէր մեր Յիսուս Քրիստոս, որ առաջնորդեցեր Յովսեփու Յեգիպտոս, և Իսրայէլացւոցն ընդ ծովն կարմիր, և Մովսէսի 'ի լեառն Սինէական, և ժողովրդեանն յերկիրն Պարգևաց, և Կղէօպեանցն ճանապարհակից եղեր Յեմմաուս:

Աղաչեմ զքեզ տէր՝ առաջնորդեա՛ ինձ և եղբարց իմոց գընալ խաղաղութեամբ զառաջիկայ

digitised by A.R.A.R.@

ընթացս. փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ Թշնամեոյն. եւ բարի առաջնորդեա՛ 'ի դէմ եղեալ ուղին. զի դու ես ճանապարհ եւ ճշմարտութի եւ կեանք մեր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Աղօթք՝ յորժամ յորոգայթ անկանի ոք, ասացեալ է սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին:

Օրհնեա՛լ է մարդասիրութի քո տէր իմ եւ փրկիչ Յիսուս Քս, ընդէր լքանես զիս. դու միայն ես ամենակարող. եւ անուն քո զանոխակալութի եւ զմարդասիրութիւն

ցուցանէ · գթա՛ յիս՝ վասն զի դու ես միայն մարդասէր։ Ապրեցո՛ զիս զանկեալս 'ի մեղս · զի դու ես միայն առանց մեղաց։ Հա՛ն զիս 'ի աղմկոյ անօրէնութե̃ իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեանս յաւիտենից։ Փրկեա՛ զիս 'ի գազանէ որսողէն · քանզի ահա՛ իբրև զԱռիւծ գոչէ և մռնչէ կամելով կլլանել զիս։

Արդ տէ՛ր իմ փայլատակեա՛ զփայլատակունս քո և կործանեա՛ զզօրութի̃ նոցա, երկիցէ և խաւարեսցի յերեսաց քոց · քանզի անկա՛ր է և ո՛չ ունի զօրութիւն կալ առաջի քո, և ո՛չ առաջի երեսաց սիրողաց քոց։ Տեսանէ ըզ

digitised by A.R.A.R.@

զօրութիւն նշանի խաչի քոյ տէր՝ և զարհուրի . և ամաչելով 'ի բաց հեռանայ յայնցանէ՝ որք կարդան առ քեզ:

Այժմ տէր՝ կեցո՛ և ապրեցո՛ զիս , վասն զի 'ի քեզ ապաւինեցայ . հա՛ն 'ի նեղութենէ զանձն իմ, զի մի՛ խապառ կորուսցէ զիս նենգաւորն՝ որ մարմնչի ընդ իս ծածուկ հնարիւք:

Որ խորհրդոց ես տէր , և քննես զսիրտս և զերիկամունս , սրբեա՛ զսիրտ իմ և զխորհուրդս 'ի զազիր և 'ի պիղծ խորհրդոց . զի մի՛ խապառ կորեայց 'ի յաւիտենական կորուստ:

Որ կարօղդ ես ամենայնի , ողոր-

digitised by A.R.A.R.@

մեա́ ինձ ա́ծ իմ. տո́ւր շնորհ ար-
տասուաց մեղուցեալ հոգւոյս ,
որպէս զի լուացից զբազմութի̃ մե-
ղաց . զի արբեցայց 'ի ձեռաց ա-
նողորմ հրեշտակաց` որ արկանեն
զամբարիշտսն 'ի հուր գեհեննին .
Երանի՛ թէ լայի հանապազ աղա-
չելով զքեզ ա̃ծ , զի մի՛ անարժան
գտայց 'ի ժամուն` յորժամ գայ-
ցես . և մի՛ լուայց զահաւոր ըղ-
ձայնն զայն , թէ երթ 'ի բաց մը-
շա́կք անիրաւութեան` ո́չ գի-
տեմ ուստի՛ էք ։

Ա՛ստուած բարձրեալ միայն
առանց մեղաց , շնորհեա́ ինձ մե-
ղաւորիս յաւուր յայնմիկ զբա-
ղում գթութի̃ քո . զի մի՛ յայտ-

digitised by A.R.A.R.@

նեսցին ծածուկ ամբարշտութիւք իմ առաջի տեսողաց Հրեշտակաց և Հրեշտակապետաց, մարգարէից՝ առաքելոց և արդարոց սրբոց։ Այլ ապրեցո՛ զիս զամբարիշտս շնորհօք ողորմութեն քո. ընկա՛լ զիս 'ի դրախտն փափկութեն ընդ-կատարեալ արդարոն. ընկա՛լ զա-ղօթս մեղուցեալ ծառայիս քո բարեխօսութբ սրբոցն որք հաճոյ եղեն քեզ՝ Յիսուս Քրիստոս տէր-մեր։ Եւ քեզ ընդ հօր և սուրբ հոգւոյդ փառք յաւիտեանս յա-ւիտենից, ամէն։

digitised by A.R.A.R.@

Աղօթք վասն որդեծնութեան ամլոց։

Աստուած ամենազօր, որ ա-
րարեր զերկինս և զերկիր. զերկինս
լցուցեր բազմութեամբ զօրաց ան-
մարմնոց վասն մեծի փառաց քոց.
և զերկիր զարդարեցեր պէս պէս
բուսովք և տնկովք, ունելով իւ-
րաքանչիւր սերմն ըստ ազգի իւր-
եանց։

Եւ զմեզ ընդերս երկրի բեղմ-
նաւորեցեր պէս պէս անհամար և
անպակասելի սերմամբ, տալով
նոցա զօրութիւն պտղաբերութեան.
և զզանազան կենդանիս ՚ի գոյ ա-
ծեր, պարգևելով ամենեցուն ըզ-
ծնունդ և զաճումն։

digitised by A.R.A.R.@

Ստեղծեր և զմարդն ըստ պատկերի և ըստ նմանութեան քո, և զարդարեցեր ազգի ազգի շնորհօք հոգւոյն քո սրբոյ, և ճոխացուցեր զնա հոգևոր և մարմնաւոր բարութեամբ. արու և էգ արարեր զնա, և ամենայն օրհնութեամբ քով ետուր նմա զօրութիւն աճելոյ և բազմանալոյ։

Եւ քանզի ոչ եկաց 'ի հրամանս քո զոր պատուիրեցեր նմա, ամենայն երևելի արարածք անկան ընդ պատժովք. վասն որոյ զօրութիւն բնութեան նոցա տկարացան, մինչև երբեմն 'ի բնաւորական ներգործութիւնս իւրեանց պակասիլ։

Իսկ դու ամենազօր Թագա-

digitised by A.R.A.R.@

ւոր, որ զարարածս ա՟մ ունիս ընդ քոյով իշխանութ՟բ, և վարես զամենեսին քաղցրութ՟բ կամաց քոց, զօրացուցանես զտկարսն, և զամուլսն առնես բազմածինս. բղխեցուցանես զմեղր 'ի վիմէ, և իւղ յապառաժէ, և կարող ես 'ի քարանց յարուցանել որդիս Աբրահամու։

Դու զամուլ արգանդ Սառայի ըստ անսահման ողորմութ՟ն քո պտղաբեր արարեր, և բազմացուցեր զզաւակ նորա որպէս զաստեղս երկնից բազմութ՟բ։

Դու բացեր զփակեալ արգանդ Աննայի մօրն Սամուէլի, և եօթնեակ զաւակօք բարգաւա-

digitised by A.R.A.R.@

ճեցեր։

Դու զպատուական ամուլն Եղի-
սաբէթ որդեծին արարեր , շնոր-
հելով նմա զմարգարէն և զառաք-
եալն զկարապետն Յովհաննէս։

Դու և Յովակիմայ և Աննայի
՚ի ծերութեն խուրեանց պարգևեցեր
զաւակ օրհնութեն զսուրբ կոյսն
Մարիամ ածածին , յորում օրհ-
նեցան ամ ազգք երկրի։

Վասն որոյ և մեք նուաստ և
տառապեալ ծառայք քո գիտելով
զանսահման զօրութիւն քո զմեծ և
զհզօր , և զանճառ մարդասիրու-
թիւն քաղցրութեն քո , անկանիմք առա-
ջի անոխակալ տէրութեդ քո , և
աղաղակիմք և աղաչեմք և հայցեմք

digitised by A.R.A.R.@

՚ի քէն բա՛զումողորմ, տո՛ւր տա-ռապելոյ ծառայի քո և աղախնոյ քո այսոցիկ պտուղ որովայնի ՚ի փառաբանութիւն և ՚ի գովեստ ան-ուանդ քում սրբոյ։

Այո՛ տէր ա͞ծ մեր՝ խոնար-հեցո՛ զունկն քո, և լո՛ւր աղաչա-նաց ծառայից քոց, և զուարճա-ցո՛ զսոսա ծննդեամբ զաւակաց, մնուցանել զնոսա պաշտօն բարի երկիւղիւ քո, և առնուլ վարձս բարեաց ՚ի մարդասիրէդ ըստ ա-ռատ ողորմութեան քո։

Զի դու ես միայն ամենազօր թագաւոր, և չիք ինչ քեզ ան-հնարաւոր, և քեզ մատուցանեմք փառք՝ պատիւ և երկրպագութիւն

digitised by A.R.A.R.@

Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

---

Աղօթք վասն դժուարածնին յղի կնոջ:

Տէր ա՟ծ մեր Յիսուս Քրիստոս՝ մեծ և բարձրեալ, անայլայլելի, անփոփոխելի, և մշանջենաւոր. որ իջեր ՚ի յերկնից և մարմնացար ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ Հոգւովն սրբով. և զապականեալն մեղօք զբնութ՟ի մեր ՚ի նախաՀօրն յանցանաց՝ որով ա՟մ կանացի բընութ՟ի ընկալաւ զպատուհաս անիծից՝ ցաւօք և տրտմութ՟բ ծնանիլ զզաւակ, սրբեցեր սաստա-

digitised by A.R.A.R.@

ծութեամբ քով։

Եւ արդ՝ աղաչեմք զքեզ մայր դասէր Թագաւորի՝ ստեղծող և նորոգօղ մեր՝ և բժիշկ հիւանդութե̃ս մերում, բժշկեա և առողջացո՛ (այս անուն) աղախին քո 'ի հոգեկան և 'ի մարմնական յախտէս յայսմանէ։

Առաքեա՛ զօգնութիւն քո 'ի սրբութե̃ քումմէ, և տո՛ւր սմա զօրութի̃ ծննանիլ զզաւակ. որպէս զի զպտուղ որովայնի իւրոյ մաքրեալ յա̃մ արատոյ ծննդեամբ սուրբ աւազանին՝ ընծայեսցէ եկեղեցւոյ քում սրբոյ։

Շնորհեա՛ ծննդականիս այսորիկ հանդարտութ̃ և առանց վնա-

digitised by A.R.A.R.@

սու հաստանիլ ՚ի խնդութեն. և ամ տանց հաւատացելոց անձին և բազմանալ ՚ի փառս տէրութեն քո, և ՚ի լրումն ածային քո բանին, եթէ աճեցէք և բազմացարուք:

Այո՛ տէր ած մեր, լո՛ւր և այժմ խնդրուածոց անարժան ծառայիս՝ և ամենեցուն որ շուրջ կան սա, բարեխօսութբ անարատ ծնօղի քո սբ ածածնի, և ամ սրբոց քոց:

Զի քեզ միածնի որդւոյդ, և անսկզբն և համագոյ հօր քո, և կենդանարար և ամենասուրբ հոգւոյդ՝ վայելէ փառք պատիւ և երկրպագութի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

digitised by A.R.A.R.@

Աղօթք վասն Թպղայի և այլ՝ որ ոչ մերձենայ ՚ի ծառայս քո։

Տէր Յիսուս Քրիստոս՝ ամենազօր ողորմած՝ լե՛ր պարիսպ և աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն. զի ամ̃ մրրիկ խռովութեցն կարծեաց երկիւղին՝ ամ̃ գիւական չարեաց որք ՚ի ծնունդս կանանց ողացկանի զարհուրեցուցանելով ալք կոչեցան գիշատեսիլ երևմամբ՝ պէս պէս ախտիւք թմրութք խեղդնացս առնելով, և որ ինչ հաղըից նոցին լցեն չարահնար որոգայթք՝ հեռերեալ հալածեսցին ՚ի գլխոց ծառայս քո, ամէն։

digitised by A.R.A.R.@

Աղօթք՝ չար նազարի և չար լեզուի,
և ամենայն փորձանաց։

Տէ՛ր ա̃ծ մարդասէր՝ մարդասիրի հօր որդի դու ես պահապան և օգնական յուսացելոցս ՚ի քեզ, ողորմութե̃ քով նայեա՛ ՚ի ծառայս և պահեա՛ անփորձ ՚ի չարէ և անսայթաք յորոգայթէ երևելի և աներևոյթ թշնամւոյն, ՚ի չար աչաց և ՚ի չար լեզուէ և յաւուր չարէ։

Այլև բարեխօսութե̃ սուրբ զօրավարացն, սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին. և սրբոյն Թէոդորոսի և Գէորգայ զօրավարացն, և Մեր-

digitised by A.R.A.R.@

կերլոսի զինաւորին, Անդրէի զօ-
րավարին, և չորից զինուորացն՝
Բասոսի՝ Եւսեբի՝ Եւտիքի և
Բասիլիդեայ, և սրբոյն Մինասայ՝
Երմոգինեայ և Գրաբոսի, և սրբոց
Ատոմեանց՝ Ոսկեանց և Սուքիա-
սանց, Խարիթեանց, և ամ սրբոց
բարեխօսութբն փրկեա՛ ՚ի սրոյ և
յամ հարուածոց երևելեաց և
աներևութից, և յամ չարեաց պա-
րսպեա՛ զծառայս քո։

Աղօթք առ երկնային զօրսն։

Ընդ անմահ արարչին սպասա-
ւորք անմարմինք՝ վերին զօրացն
դասապետութիւնք։ Աթոռք․ Քե-

digitised by A.R.A.R.@

րովբէք, և Սերովբէք. Տէրութիւնք, Զօրութիւնք և Իշխանութիւնք. Պետութիւնք, Հրեշտակապետք, և Հրեշտակք. Միքայէլ, և Գաբրիէլ՝ պետք վերնական զօրացն դասուց, որք անլռելի ձայնիւ փառաբանութիւն մատուցանեն ամենասուրբ Երրորդութեան, և երեքսրբեան ձայնիւ երգանակեն զերգս ասելով՝ Ողորմեա՛ դու ստեղծեր մի՛ կորուսաներ, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ. օգնական և պահապան լերուք ծառայիս աստուծոյ։

Աղօթք առ դրան սրբոյ եկեղեցւոյ՝ սրբոյն Յովհաննու ոսկեբերանի։

Տաճար ա̃յ և բնակարան սուրբ հոգւոյն, 'ի քէն սուրբ աւազանաւն կոչեցայ յորդեգրութ̃ի հօրն երկնաւորի։ Այսօր 'ի քեզ կամեցայ պատարագիլ գառն անարատ, և ես դիմեալ եկի առ դուռս քո. և աղաչեմ զքեզ՝ մաքրեա՛ զիս վերստին լուացմամբ, և սրբեա՛ 'ի մեղաց, և արա՛ արժանի մտանել առաջի սրբոյ սեղանոյդ յերկրպագութիւն. որում վայել է փառք՝ պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն։

digitised by A.R.A.R.@

## Աղերս առ սուրբ առաքեալսն։

Անմահ գառինն հզօրի, որ միշտ զենեալ և կենդանի. երկոտասան դասանցդ խմբի, ձեզ այս աղերս մատուցանեմ։ Սուրբ Պետրոսի և Անդրէի. երկուց եղբարց նախակոչի, Յակոբոսի, Յովհաննիսի ձրկ նորս որդւքն Զեբէթի. Փիլիպպոսի, Բարդուղիմէի. Թովմայի և Մատթէոսի. Յակոբայփեայ. Թադէոսի, Շմաւոնի, Մատաթէի. երկոտասան առաքելոց, ՚ի Քրիստոսէ պսակելոց. այս է բաղձանք սրտից մերոց, փրկել զմեզ յայսոց պղծոց։

digitised by A.R.A.R.@

Աղերս առ սուրբ Ստեփաննոս նախավկայն։

Ի քէն հայցեմք առաստուաղին, նախավկայ անուան արարչին. սուրբ Ստեփաննոս բացող երկնին, տեսող գՅիսուս յաջմէ ծնողին. լեր բարեխօս արեամբ քոյին, տուր մեզ հանգիստ 'ի յանկողնին. արթուն լինիլ յառաւօտին, բարեբանել զլոյսն անքննին։

digitised by A.R.A.R.@

Մաղթանք առ տ̃ր Լուսաւորիչն մեր։

Լուսաւորիչ Հայր պարծանաց, ընկա՛լ զբանս զայս մաղթանաց. և աղաչեմ զՀայրն փառաց, ջնջել զգիր մեր յանցանաց։

Այլ և բարեխօսութիւ̃ երեք Հարիւր և տասն և ութ Հայրապետացն՝ և ուղղափառ եպիսկոպոսաց աղօթիւքն պահեա՛ տէր ա̃ծ զծառայս քո։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

## Պարծանք հաւատացելոց ՚ի Քրիստոս և գովեստ սուրբ խաչին որ երևեցաւ Յերուսաղէմ յաւուր Կիւրղի հայրապետին, ՚ի Մայիսի եօթն։

Խաչն Քրիստոնէից յոյս. խաչն կուրաց առաջնորդ. խաչն մոլորելոց դարձուցիչ։ Խաչն աղքատաց մխիթարութի՟. խաչն մեծատանց սանձ. խաչն ամբարտաւանից քակտումն։ Խաչն ախոյեան դիւաց. խաչն բանսարկուին յաղթութի՟. խաչն մանկանց դաստիարակ։ Խաչն աղքատաց մեծութիւն. խաչն անյուսից յոյս. խաչն

digitised by A.R.A.R.@

նաւավարաց նաւապետ։ Խաչն տագնապելոց հանգիստ․ խաչն պատերազմողաց պարիսպ․ խաչն հայր որբոց։ Խաչն վերարկացու այրեաց․ խաչն անկրաւաց դատաւոր․ խաչն արդարոց խորհրդակից։ Խաչն նեղելոց հանգիստ․ խաչն տղայոց պահապան․ խաչն արանց գլուխ։ Խաչն ծերոց կատարումն․ խաչն խաւարելոց լոյս․ խաչն Թագաւորաց վայելչութիւն։ Խաչն զէն յաւիտենական․ խաչն բարբարոսաց ազատութի․ խաչն անխրատից իմաստութիւն։ Խաչն անօրինելոց օրէնք․ խաչն մարգարէից քարոզ․ խաչն առաքելոց պատմութիւն։ Խաչն մարտիրոսաց պարծանք․

digitised by A.R.A.R.@

խաչն վանականաց պահապան · խաչն կուսանաց զգաստութիւն։ Խաչն քահանայից ուրախութի՟ · խաչն եկեղեցւոյ հիմն · խաչն տիեզերաց զգուշութի՟։ Խաչն մեհենից աւերիչ · խաչն բագնեաց կործանիչ · խաչն ձենձերաց ապականիչ։ Խաչն հրէից դայթակղութի՟ · խաչն ամբարշտաց կորուստ · խաչն ակարաց զօրութի՟։ Խաչն հիւանդաց բժշկութի՟ · խաչն բորոտաց սրբիչ · խաչն անդամալուծաց ուղղիչ։ Խաչն պագշոտաց բժշկութի՟ · խաչն քաղցելոց հաց · խաչն ծարաւելոց աղբիւր։ Խաչն մերկաց վերարկու · խաչն անբարբառ բարեխօս առ տէր վասն մեր հաւա-



digitised by A.R.A.R.@

տացելոց 'ի Քրիստոս։

Որում վայելէ փառք և երկրպագութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Անուանք սուրբ նշանացն՝ որք են բա-
րեխօս վասն մեր։

Բարեխօսութիւն ածային սուրբ նշանին, և անբարբառ բարեխօսին Քրիստոսի վասն ազգի մարդկան, սրբոյ կենաց խաչափայտին Քրիստոսի։ Աւազակի սուրբ նշանին. Վարագայ սուրբ նշանին. Երևման սուրբ նշանին։ Հաղբատայ սուրբ նշանին. Վանկոյ սուրբ նշանին. Կաղբայ սուրբ նշանին։ Ագինեայ սուրբ նշանին. Սերեխոյ սուրբ նշանին. Մարաւայ սուրբ նշանին։ Գանձասարայ սբ նշանին. և Քրիստոսի սուրբ Գե-

digitised by A.R.A.R.@

զարդի ․ Գետարգել սբ նշանին։ Ապարանից սբ նշանին ․ Կարմրակ սուրբ նշանին ․ Սքանչելագործ սուրբ նշանին։ Ծիծռան սուրբ նշանին ․ Ախթամարայ սուրբ նշա֊ նին ․ Սանահնու սուրբ նշանին։ Վարոսի սուրբ նշանին ․ Կիպրոսի սուրբ նշանին ․ Կոստանդիանոսի սուրբ նշանին։ Եւ Տապանակի սբ նշանին ․ Վրաց Հռոմոց սուրբ նշանին ․ Կոստանդնուպօլսոյ սուրբ նշանին։ Հապէշու և Խպտոյ սբ նշանին ․ Հացունեաց սուրբ նշա֊ նին՝ որ 'ի դալառեանն յառաջա֊ գոյն ․ Գայլակլայ սուրբ նշանին։ Հնդու սուրբ նշանին ․ Կապընկայ սուրբ նշանին ․ Պիղեռու սուրբ

digitised by A.R.A.R.@

նշանին։ Հռիփսիմէի սուրբ նշանին. Բողոս սուրբ նշանին. Սարի սուրբ նշանին։

Եւ այլ ամ սուրբ նշանացն՝ որք ընդհանուր աշխարհս լիցին, նոցին անբարբառ բարեխօսութեամբ ողորմեա՛ տէր ած ծառայիս քոյ։

Հրաշագործութին Քրիստոսի զոր արար։

Նա Քրիստոս բժշկեաց ՚ի ժողովրդենէն բազում հիւանդս. լուսաւորեաց զկոյրս. հալածեաց ՚ի մարդկանէ զդևս. սրբեաց զբորոտս. գնացոյց զանդամալոյծն՝ որ ՚ի Բեթհեզդայ անկեալ դնիւր երեսուն և ութ տարի. և յարոյց

digitised by A.R.A.R.@

՚ի մեռելոց զչորեքօրեայ մեռեա-
լըն. և այլ անթիւ սքանչելիս և
հրաշագործութիւնս արար: Նոյն
ողորմութեն իւրով հեռի արաս-
ցէ ՚ի մէնջ, զգլխացաւն, աչաց
ցաւն, ականջացաւն, ատամնա-
ցաւն, սրտացաւն, միջաց ցաւն,
կշտացաւն, փորացաւն, ծնկացա-
ւըն. և յամ ցեղ ցաւոց ազա-
տեսցէ զծառայս, ամէն:

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@



digitised by A.R.A.R.@

Ի բանից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօթից, և դիւասարսուռ ջերմեռանդնակ ախտաւորուեց՝ Աստուծով փարատիչ։

Ե․ Տ՛րդ՝ այսքանեացս անբաւ֊ելից հրաշից հանդերձիչ հայր ա֊մենատեղծ՝ անուանդ ահաւոր․ ձայն սարսափելի․ կոչումն ընտա֊նի․ բան համբուրելի․ ազդումն սքանչելի․ հրաման սոսկալի․ էու֊թիւն անքննելի․ գոյութի անձա֊ռելի․ խնկութի անբաւելի․ զօրու֊թի անզննելի․ կամք անմեկնաբարի․ տէրութի անսահմանելի․ մեծութի

digitised by A.R.A.R.@

անչափելի․ բարձրութիւն անբովան-
դակելի․ ողորմութիւն անկշռելի․
առատութիւն անհատանելի․ պատ-
ճառ որդւոյ հայրութեան, այլ ո՛չ
նախադրութեան․ քե՝ և 'ի ձեռն
քոյդ անպարագրելի զօրութեանդ՝
սաստեա՛լ տագնապօղ և դիւական
անհնդխս ջերմութեն, որ սպրդեալ
մուծալ ընդ մեղաց՝ զի փախիցէ
'ի մարդոյս, զարհուրեալ 'ի սխրա-
լի և յանբաւելի արեան վտակի՝
գառինդ երկնաւորի․ որով սրբե-
կեալ միանգամ 'ի մշտնջենաւորս՝
համայն մաքրեցաք։

Զ․ Եւ արդ՝ յայս պատկառելի
խոնարհութեն արարչակերպս խոր-
հրդոյ, ամաչեսցէ սատանայ 'ի

digitised by A.R.A.R.@

գործս չարեաց խորոցն հրեշտա-
կաց . տանջեսցի և հալածեսցի ,
հեռացեալ և արտաքս առաքեալ
'ի շինուածոյ խորանէ քում ըն-
նակութեան՝ յարտաքին խաւարն։
Եւ ջնջեալ մաքրեա՛ զարտասուս
ողբոցս 'ի դիմաց մերոց , և զհա-
ռաչումն ձայնիս հեծութեան 'ի
սրտից մերոց։ Եւ յիշատակաւ հար
մա՛ն հեղուսիցն՝ քստմնափուշ
տաժանատեսիլ ոգեպահանջից ,
որով պնդեցաւ միածնին քո յաշ-
տարակ խաչին , ցաւեսցի չարին։
Եւ 'ի կողահերձ սայրասուր սլաքէ
ուժգին բախմանէ , որով զվէրն
մեծ ընկալաւ , խոցմա՛ն սատակես-
ցի սկզբնարար մահուն։ Եւ զի

digitised by A.R.A.R.@

խոնարհեցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին ՚ի ծոց քո՝ բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն Բելիարայ՝ ՚ի կո՛ր կործանեսցի, ամենայնիւ հերքեալ ՚ի կորուստ։ Եւ զի ղօղեալ ծածկեցաւ անմահն խոկութի՛ յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտութիւն՝ կարծեալ գոռոզին՝ ՚ի յատակս մահու դժոխոց՝ մթին ստուերին՝ յառեալ դիտեսցէ. և յիշեսցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտութի՛ թիւնից վիշապին՝ կենարարն կրկէք ամենազօրին։ Վասն զի ՚ի փառս քո՝ հա՛յր ողորմութեան, երբ ՚ի գովեստ որդւոյ քոյ՝

digitised by A.R.A.R.@

հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ո՛չ պիտակ ինչ սոսկ զօրութեանն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն խորութե՛, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք։

Եւ քեզ միայնոյ սուրբ Երրորդութե՛դ, հաւասարապատիւ տէրութե՛դ, համաբուն՝ անբաժին ինքնութե՛դ՝ օրհնաբանութիւն, գովութի՛, զօրեղութի՛, և անճառ վայելչութիւն մեծութե՛, բարեվիճակ հարթութե՛, զուգակշիռ հաւասարութեան՝ յաւիտեանս, ամէն։

digitised by A.R.A.R.@

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գի-
շերայնոյ, ասացեալ սրբոյն Գրիգորի
Նարեկացւոյ։ ԺԲ

Գ. Ընկա՛լ քաղցրութե՛ աէ՛ր
ա͞մ հզօր՝ զդառնացողս զաղա-
չանս. մատի՛ր գթութե՛ առ սպառ-
կացեալս դիմօք. փարատեա՛ ամե-
նապարգե՛՝ զամօթական ախտու-
թի՛ս. բա՛րձ յինէն ո՛ղորմած՝ զան-
բերելի ծանրութի՛ս. անջրպետեա՛
հնարաւոր՝ զմահացու կրթութի՛ս.
աւարեա՛ միշտ յաղթօղ՝ զխաբո-
ղին հաճութի՛ս. բացադրեա՛ վե՛ր-
նայի՛ն՝ զմոլեկոյն մառախուղ.
կնքեա՛ կե՛ցուցի՛չ՝ զկորուսչին ըն-
թացմունս. ցրուեա՛ ծածկատես՝
զըմբռնողին չար դաւմունս. խոր-

digitised by A.R.A.R.@

տակեա՛ մնջենին՝ զմարտողին դի֊
մեցմանն։ Տեառնագրեա՛ քո ան֊
ուամբդ զլուսանցոյց երդ յար֊
կիս. պարփակեա՛ քո ձեռամբդ
զառաստաղ տաճարիս. գծագրեա՛
քո արեամբդ զմուտ սեմոց սենե֊
կիս. կերպացո՛ զքո նշանդ ՚ի հետս
ելից մաղթողիս. ամրացո՛ քո ա֊
ջովդ զհանգստեանս խշտի. մաք֊
րեսցե՛ս ՚ի հաղեից զծածկարան ան֊
կողնոյս. պահեսցե՛ս քո կամօքդ
զտառապեալ անձն ողւոյս. ան֊
խարդա՛խ արասցես զքո շնորհ֊
եալ շունչ մարմնոյս. կացուսցե՛ս
շրջափակ զպար զօրուդ երկնայ֊
նոյ. կարգեսցե՛ս ՚ի դիմի ընդդէմ
դիւացն զաստու։ Տո՛ւր հանգիստ



digitised by A.R.A.R.@

բերկրութեան մահահանգոյնս նկրհ
ման 'ի խորութեան գիշերիս, բարե-
խօսութեամբ հայցուածոց սրբոց
ա͞ծածնիդ` և ամենայն ընտրելոց։
Ամփոփեալ պարուրեա՛ զպատու-
հան տեսութեանց զգայարանացս
իմաստից անզարհուրելի զետեղ-
մամբ` 'ի ծփական խռովութ͞եց,
կենցաղական զբաղմանց, անրջա-
կան երազոց, խօլականաց ցնորից,
յիշատակաւ քո յուսոյդ անմ͞նա-
սելի պաշտպանեալ։ Եւ սթափ-
եալ վերստին 'ի ննջմանէ ծանրու-
թեան, ամենազգաստ արթնութ͞բ`
հոգենորոգ զուարթութ͞բ 'ի քեզ
արձանացեալ, զայս ձայն մաղթա-
նաց` բուրմամբ հաւատոց քեզ.

digitised by A.R.A.R.@

ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառելից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Ձի դու փառաւորեալ ես յամ արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն։

## ԲԱՆ· ԽԱ

### ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՐԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամենայնի՝ հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ

digitised by A.R.A.R.@

առ ՚ի քէն և ո՛չ ինչ։ Որ ՚ի ծա-
գել անստուեր նշուլից ողորմու-
թեան քոյ փառաց, հալեն մեղք․
հալածին դևք․ ջնջին յանցանք․
խզին կապանք․ խորտակին շղ-
թայք․ կենդանածնին մահաց-
եալք․ բժշկին հարուածք․ ողջա-
նան վէրք․ բառնին ապականու-
թիւնք․ անդի տան ախորութիւք․
նահանջին հեծութիւնք․ փախնու-
խաւարն․ մեկնի մէգն․ մերժի մա
ռախուղն․ փարատի մռայլն․ ապա-
ռի անջամուղջն․ վերանայ մու-
թըն․ գնայ գիշերն․ տարագրի
տագնապն․ չքանան չարիքն․ հա-
լածին յուսահատութիւնք․ և թագա
ւորէ ձեռն քո ամենակար՝ քա-

digitised by A.R.A.R.@

ւէիցդ ամենայնի։

Բ. Որ ո՛չ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել, թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ։ Զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին. ՚ի տարր գոյի, և յերգս ծառայց աշխարհի. սկիզբն ամենայնի, և յամենայնի. ո՛ւմ ըրմամբ օրհնեալ ՚ի բարձունս. և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս, ամէն։

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ․ ՁԴ
### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա․ Արքայ երկնաւոր․ թագաւոր բարձրեալ․ տէր բոլորից․ ամենից ակնկալութի․ սանձօղ տեսականաց․ հաստիչ իմանալեաց․ պատճառ եղանութեանց․ կազմիչ հանդերձելոց․ սուզիչ լուսոյ․ առիթ առաւօտու․ պատրաստիչ վաղորդայնի․ երևեցուցիչ երեկորի․ տարրիչ խաւարի․ արուեստաւոր բարեհնար․ իմաստութե գործնեայ․ քաւարան օրհնեալ․ հալիչ մեղանաց․ հալածիչ ցաւոց․ քակոյիչ դառնութեց․ պահպանարան հանգստեան․ հնարք նիրհ-

digitised by A.R.A.R.@

մա՛ն · յարմարիչ քնոյ · պարգևիչ ննջման · ընչոյ յարակարգութեան · զգայութե՛ն տևողութի · ցրիչ ցնորից · յեղանակիչ անրջոց · փոխարկութի զարհուրմանց · այլայլութի տխրութեց · խափանիչ խլթմանց · ընդարձակիչ կարծեաց · համադրութի ծփմանց · ահագնութեն խարդախմանց · հարուածիչ դիւաց · փախուցիչ ախտից · ընկղմիչ դայթակղութեանց:

Բ · Պաշտպանեա՛ երկնաւորդ ձեռամբդ · զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ · ամփոփեա՛ ամենակալդ թևօք · ծածկեա՛ ածեան խնամօքդ · ամրացո՛ վերակացութբ վերնայնոցդ · շուրջանակի պարապ-

digitised by A.R.A.R.@

եմ՝ դուժարակօրդ անմահից. 'ի յամենուստ պարփակեմ՝ կցորդութեամբ հրեշտակացդ. վանեմ զընդդիմամարտն իմ՝ զինուորուք զուարթնոցդ. սպառապատեմ զսատանայս՝ անձանձնիդ մաղթանօք. զբանակս անդրանկացդ՝ բարեկարգեամ ինձ պահապանս։ Բա՛ց ընդաչացս դիմաց՝ և զմտացս իմ տեսանելիս. զգաստ արա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութի. վերացո՛ ուէր 'ի զգայութեացս՝ զմածեալս յիմարութի. բա՛րձ միա՛յն բարեգործ՝ զպատրուակն թանձրութի։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութի քո ծագեա՛. ընդ ելից արևուն՝ արդա

digitised by A.R.A.R.@

րութե̃ արեգակեալ ՚ի յանձկութե̃ն սրտիս մնացէ · ճառագայթ քո փառացդ՝ ՚ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի · խաչիդ տեառնագրութե̃ ընդ շունչս և ընդ մարմինս համաւրիս տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարս պահպանու ոգւոյս՝ որ ՚ի սմին ։ Զի դու ես ա̃ծ անքննին , առ ամենեսին բաւական , և յամենայնում բովանդակ · օրհնեալ յաւիտեանս , ամէն ։

# ԲԱՆ. ՁԹ

## Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած և տէր. կեանք և արարիչ. ողորմած. գթած. լոյս. երկայնամիտ. անոխակալ. մարդասէր. ամենագութ. պարգևատու. փրկիչ. օրհնեալ. գովեալ. բարեբանեալ: Դարան ամրութե. պատսպարան վստահութե. առանց նենգութե բարի. առանց խաւարի ճառագայթ. քաւիչ մեղաց. ողջացուցիչ վիրաց. անհասանելեաց հնարք. անմատչելեաց հպաւոր. անյուսութե ելք. անուն քո խոստովանեալ՝ ընդ որդի. և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և

digitised by A.R.A.R.@

Հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան, յաւիտեանս, ամէն։

## ԲԱՆ. Ղ.

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարեբանեա՛լ ա՟ծ երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ. մեծութիւն ահեղ. գթութի՟ օրհնաբանելի. ողորմութի՟ խոստովանելի. բարերարութի՟ երկրպագելի. խնամակալութի՟ պաշտելի. մարդասիրութի՟ տօնելի. պահպանութի՟ խնկելի. բարձրեալ ան-

digitised by A.R.A.R.@

քննին · մերձաւոր կամարար · ա-
պաւէն անկասկածելի · մխիթար
սգաւորաց · փարատիչ վշտաց · ապա-
քինիչ ցաւոց · ապաստանն վհա-
տութեց · բարձումն պարտեաց ·
փոխարկիչ կարեաց · կարգաւորիչ
կրից · յարմարիչ բանից · սանձար-
կու լեզուի · շռայլութի չեչոյ ·
կացուցիչ հաղագի · ամփոփիչ խոր
հրդոց · կրթարան կամաց · արձա-
նացուցիչ յուզմանց · հանդար-
տութի մրրկաց · խաղաղութի ծփա-
նաց, որ ունիս զթեւոց ամէնընթեաց
իշխանականիս, և խնամութբ նր-
ւաճեալ առ քեզ դարձուցանես ։

Բ · Գոհարանեալ միշտ երախ-
տաւոր, որ հեզութբ անհպարտու

թեան երկայնամտեալ հանգչիս անհնչանօք անճառ հրաշիւք՝ յանձինս սրբոց: Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ գթած. սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ՝ գխմելոյս 'ի լոյսդ վերին: Ձեռնկալու մեծ վստահութե, որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առ հաւատչեաւ ապաշողաց մատանց յայտնի երևեալ. ապաւինութի հանգստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութե: Ազատութի շնորհաձիր, որ սաս լնուցես առանց

digitised by A.R.A.R.@

փոխատրութեան փրկանաց · առա-
տութի՛ աննախանձելի , որ քոյին
փառաւորութեամբ՝ զանարգ նիւթ
հողոյս ճոխացուցանես: Պայծա-
ռութիւն անստուեր , որ ճառա-
գայթիւք ահեղ բարձրութե՛ պա-
րածանկեալ զթշուառս՝ կրկին
բարգաւաճ առնես: Քաւիչ մե-
ղանաց բազմաց , որ զհեղեղեալս 'ի
փրկութենէ առաջնոյն պայծառութեամբ
նորոգեալ՝ վերստին վայելչացու-
ցանես: Հնարաւոր դիւրահաս առ
ա՜մ անբաւ գերամբարձութի յա-
ւէտ յառաջեալ · ելք վստահութե՛
առ խոստացելոցն վայելս · երանու-
թի՛ անձկալի , յոր զկենդանութի՛
ընչոյս լքանելն է ախորժելի , զի

digitised by A.R.A.R.@

զքեզ՛ գաւից կենդանի։ Կամք ան-
փոխադրելն՝ առ՚ի քաւութի̃ գերոյս
զօրացեալ ամենագովելն․ անխա-
լելն դեղ կենաց, որ և մեռելոց՝
բնաւին եղծելոց առնես զքան-
չելիս։ Ամենաստեղծ աներկբայե-
լի, որ զհուրբ կիզեալն, և զհող-
մով հոսեալն, և զժանեօք գազա-
նաց ծախեալն, ՚ի քթթել ական
նոյլին հիւթականութբ̃ անպակաս
յարուցանես։ Անհաւասար հա-
մարձակութիւն, յորում ա̃ծօրէն
պանծանօք պարծելն է իրաւացի։

Գ․ Հայեա՛ց տէ՛ր յերկնից զը-
ւարթ քաղցրութբ̃՝ յամենակոր-
ծան վտանգ նեղելոյս, և արա՛
անդորր հանգստական դիւրաւոր

digitised by A.R.A.R.@

՚ի բազմատագնապս հեծութենէ։
Եւ զյարուցեալ գումարս սա-
տակչացն, եթէ որպատագէնք այ-
ակեան զժնեայ հնարաւորութե-
բուռն մարտակցաց պատկանեալ
զինուք, եթէ մեղաց աղեղ՝ և քա-
տանձի կերպարանք, եթէ ցաւոց
և ախտից վտանգիչ և կորստական
նշմարանք մերժեսցես հանցես
հատցես խափանեսցես և հալա-
ծեսցես՝ հեռի ՚ի սահմանաւ խաղա-
տարադրեալ անդարձ որոշմամբ
վերջին կորստեանն. և կառու-
ցես կացուսցես նպաստակ կենաց
և ամուր մահարձան՝ զնշան խա-
չիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝ փր-
կութիւն։ Եւ յայսմ անդորր և

digitised by A.R.A.R.@

անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան, լուծցի՛ն որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք. կապեսցի՛ն մեքենայքն. վատնեսցի՛ն գայթակղութիւքն. խայտառակեսցի՛ն հաղբիցն դրութիւք. յայտնեսցի՛ն երևոյթք որսոյն. գացի՛ն նենգողին ծուղակք. վերասցի՛ն վարմի՛ն վերարկուք. տոչորեսցի՛ն որոմանցն բոյսք. նզովեսցի՛ն բռնաւորին չարաբանութիւք. կորեսցի՛ լար խաբէութե՛ ՚ի մահ որսողին. պարսեսցի՛ն պատրողին բանսարկութիւք. պակասեսցի՛ն զէնք զրպարտողին. անկցի՛ն սուսերք մահաբերին. սուզեսցի՛ն սադրողին պատրաստու-


digitised by A.R.A.R.@

Թի՛ք • արձակեսցի՛ն տոռու՛նք տաղ-
նապողի՛ն։ Այլեյլասցի՛ն սուտ կե՛ր
պարա՛նք կեղծաւորի՛ն • սատակես-
ցի՛ն խորխատականացն խիստ յար-
ձակմու՛նք • ցրուեսցի՛ն կցորդու-
Թիւ՛նք կերչացն • բաժանեսցի՛ն
աղի՛նք աւազակացն • քայքայեսցի՛ն
բոյլք բարբարոսացն • քանդեսցի՛ն
ամրոցք ապստամբողացն • արգել-
ցի՛ն ամպրոպք յանդգնելոցն • փա-
րատեսցի՛ն փորձողի՛ն անձրեւք •
Հալեսցի՛ և ցամաքեսցի՛ եղեամն
ապանդաւորի՛ն։ Խորտակեսցի՛ եղ-
ջիւր գոռողի՛ն • մանրեսցի՛ն ամ-
բառնալի՛ք դրօշիցն կերպարանաց •
փշրեսցի՛ն ամբարհաւաճու Թիւ՛նք
հպարտացելոցն • նահանջեսցի՛ն

digitised by A.R.A.R.@

դիմեցմունք ճակատելոյն ․ քակ-
տեսցին միաբանութիւնք զօրացն
Բելխարայ, թէ անմարմինք և եթէ
մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն
ճանապարհ ՚ի մի շաւղաց հետոց՝
յեօթն տարակոյս, ՚ի գուբն ինձ
փորեալ՝ ինքեանք ընկճեսցին։
Յեղանակեսցին ձմերունք ձանձ-
րացուցչին ․ հատցի՛ կապն կցորդու-
թեան՝ մշտաջան աւազակին ․ Նող
կասցի՛ մասցս կայից՝ համբոյր շո-
ղոքորթին ․ ընդ միջեալ մեկնեա-
ցին՝ նետաձգութիւնք նեղչին ․
կացցէ ՚ի տատանման՝ նաւ խար-
դախողին ․ խլեսցին յարմատոց ան-
տի՝ տատամունք խածանողին։

Դ ․ Վասն փայտից օրհնութե

digitised by A.R.A.R.@

կենաց , յորում պրկեցար ա̃ծդ անըմբռնելի ։ յիշատակաւ բևեռացդ , որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկրի ։ արեամբդ տէրունականաւ , որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար ։ լեղւոյն դառնութե̃ , զոր արբեալ՝ զդեղատուուի̃ կորուսչին արտաքս հեղեր ։ պատմաքանութեամբ ըղձական ճառիւք կրիցն սարսափելեաց , որով զլրբութի̃ հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր ։ անուամբդ ան̃հասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ , յորմէ դողան և դատապարտին սոսկացեալ սատանի սարսափմամբ՝ բնութիւնք ա̃մ

digitised by A.R.A.R.@

երկութից և աներկութից , եղե-
ցի՛ն այս ա՟մ պարգևք շնորհաց՝
խոստովանելոյս ՚ի պաշտպանու՟ի ,
՚ի բժշկութիւն և ՚ի քաւութիւն։
Եւ մահաբեր դառնաթոյն օձին ,
և որ ՚ի նմա ազդեաց ախեղերա-
դաւ չարութիւնն , ՚ի սատակումն
եղիցի նորին . նոյն ինքն ՚ի կորուստ
և յանբժշկական հարուած տան-
ջանացն՝ սովաւ մաշեսցի , կա-
պեսցի և ըմբռնեսցի։ Եղիցի ողոր-
մութիւն ստեղծողիդ ընդ իս , և
շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբա-
ժանօրէն կապաւ միացեալ ՚ի մի։

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս
աղերս ձայնի՝ մաղթանաց գոչման՝
աղօթից հայցման , ծերոյ և ար-

digitised by A.R.A.R.@

ղայոյ , կուսի և երիտասարդի , և
եթէ յաղախնաց ոք պաղատեսցի
ա͞ծսիրաբար , հաւատարապէս ա-
նաչառութ͞ք ընկալցի՛ն 'ի քէն մասն
երանութ͞ն՝ պարտուց ազատութ͞ե ,
հասանեալ վերստին յանարատութ͞ի
նորոգ մաքրութեան , նկարեալ
դարձեալ գծոյդ կերպարան ան-
փոփոխելի։ Ահա տիրապէս՝ հըն̃ա
րաւոր զօրեղ անպատում անհաս
անխմանալի , տեսցես տատանօր 'ի
հառաչանս կողկողանաց այսր հե-
ծութեան , որ 'ի բոլորից շրթանց
ընծայեալ քեզ մատուցանի , վասն
հօր քոյ երկնաւորի և բարերարի ,
և հոգւոյդ սրբոյ փառակցի և
կենդանատուի . ա͞ծածնիդ բարե-

digitised by A.R.A.R.@

խօսումք , և խնդրուածովք ամ
սրբոց։ Զի դու ստեղծեր զամ.
և՚ի քէն եղեն ամենայնք . և դու
տիրես ամենայնի . և քեզ փառք
յամենեցունց՝ միդ յիսկութենէ
անժամանակ Երրորդութեանդ ,
զուգակցապէս փառաւորեալ յան
բաւս , և յաւիտենից յաւիտ
եանս , ամէն։

---

## ԲԱՆ · ՂԴ
### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած յաւիտենական .
բարերար և ամենակալ . ստեղծիչ
լուսոյ և յօրինիչ գիշերոյ . կեանք

digitised by A.R.A.R.@

՚ի մահու և լոյս ՚ի խաւարի․ յոյս ակն ունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց։ Որ ամենարուեստ իմաստութ̃բ քո դարձուցանես յայգ-պատուերս մահու, աննուա՛ղ ծա-գումն և անմո՛ւտ արեգակն, քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս տէրութե̃ քո խաւար գիշերոյ․ որում կրկնի ծունր երկրպագուե̃ամ եղելոց՝ երկնաւորաց և երկ-րաւորաց և սանդարամետականաց։ Որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ըն-դունիս զխնդրուածս նոցա, աստ-ուա՛ծ իմ․ և թագաւոր իմ, կեա՛նք իմ և ապաւէն իմ, յո՛յս իմ և վստահութ̃ի իմ, Յիսուս Քրիստոս

digitised by A.R.A.R.@

ա̃ծդ ամենայնի, սուրբդ հանգուց-
եալ 'ի հոգիս սրբոց մխիթարութի̃
վշտաց, և քաւարան մեղուցելոց,
որ գիտես զա̃մ յառաջ քան զլի-
նել նոցա։ Առաքեա՛ զպաշտպա-
նողական զօրութիւն աջոյ քո, և
փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և
'ի դիւէ չարէ. որպէս զի զյիշա-
տակ սոսկալի և սուրբ քո ան-
ուանդ՝ միշտ համբուրեալ շըր-
թամբք հոգւոյ ըղձութե̃ շնչոյ,
կեցից պահպանեալ ընդ այնոսիկ
որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ։

Բ. Եւ 'ի դրոշմէ խաչի քոյոյ
նշանիդ, զոր ա̃ծային արեամբ քո
ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն
շնորհ որդեգրութե̃ զմեզ մկրտե-

digitised by A.R.A.R.@

ցեր, և՚ի փառս պատկերի քո նը-
կարեալ յօրինեցեր, այսու պար-
գևօք ա̃ծակնոք՝ ամաչեսցէ սա-
տանայ. քակեսցի՛ն մեքենայքն.
բարձցի՛ն որոգայթքն. պարտես-
ցի՛ն մարտուցեալքն. պակասեսցի՛ն
զէնքն սայրասուրք. մերժեսցի՛
մէգն. փարատեսցի՛ խաւարն.
մեկնեսցի՛ մառախուղն: Բազուկ
քո հովանասցի, և աջ քո կնքես-
ցէ. վասն զի գթած ես և ողոր-
մած, և անուն քո կոչեցեալ է ՚ի
վերայ ծառայից քոց: Եւ քեզ
ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք
և իշխանութիւն յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն:

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆ. ՂԵ

### Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
### ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արեգակն արդար. ճառագայթ օրհնեալ. լուսոյ կերպարան. փափագ անձկութե̃. բարձրեալ անքննելին. զօրեղ անպատում. բարւոյ բերկրութի̃. յուսոյ տեսութիւն. գովեալ երկնաւոր. թագաւոր փառաց. Քս̃ արարիչ. խոստովանեալ կեանք: Եւ արդ՝ զթերութի̃ վրիպանաց բազմախառն ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հաճութեան Հօր քում բարձրելոյ: Որ վասն իմ 'ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ

նմանութ՟ի ամենեւին կենաց օրհ-
նութ՟ի, վերնոց և ներքնոց բա-
րեխնամօղ տեսուչ համայնից։ Զի
թէ յանձն առեր մեռանիլ վասն
իմ՝ ա՟ծ և տէրդ բոլորեցուն,
ո՞րչափ հաճեսցիս առաւել և
այժմ վտանգաւորս կրից կարեկ-
ցել, ընդ իմ պարտաւորիս միշտ
աղօթելով ազգակցաւ մարմնոյդ
առելոյ 'ի մէնջ՝ առ համապա-
տիւդ քո հայր։

Բ. Եւ վասն արեանդ պատուա
կանի միշտ մատուցելոյ 'ի հաճութ՟ի
կամաց առաքչիդ՝ բարձցի՛ն վասն
դրբ մեղուցեալ դատապարտե-
լոյս. Թողցի՛ն պարտիքն. այսպի-
նեացի՛ ամօթն. մոռասցի՛ն պար-

digitised by A.R.A.R.@

կառանքն · բարեգործեցին դատակնիքն · սատակեցին որդունքն · վերացաւ լալն · հանդարտեցաւ կրճումն ատամանցն · սպառեցին ողբքն · հատցին արտասուքն · մերժեցաւ սուգն · հալածեցաւ խաւարըն · վառնեցաւ հուրն սաստկուն · հերքեցին տանջանարանքն բաղմօրինակք:

Գ · Եկեցեն գթութիւք կամօղին և պարգևողին կենաց ամենից · ծագեցաւ լոյս · արագեցաւ փրկութիւն · հասաւ օգնութիւն · ժամանեցաւ այցելութիւն · կանխեցաւ ցօղն ողորմութեան, յառաջեցաւ արբուցաւ զանդաստանս պարքեալ՝ անկեալ ոսկերացս թը-

digitised by A.R.A.R.@

ուառութե՟ 'ի վիհն մահու. ծաղ-
կեցուսցէ՛ պտղաբերեսցէ՛ բաժա-
կըդ երկնաւոր արեան կենարա-
րիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն
լուսոյ, որ անծախապէս մշտա պա-
տարագի յիշատակ կենաց փրկուե՟
հոգւոց ննջեցելոց։ Զի ամենայնիւ
մահացեալ հոգիս մարմնովս մե-
ղաց՝ շնորհօք քո՝ գըթած, 'ի քեզ
զօրացեալ քև նորոգեցայց, զա-
եալ 'ի մեղաց անմահ կենդանութե՟
'ի յարուե՟ն արդարոց, հօր քում
օրհնեցեալ։ Ընդ որում քեզ
փառք, և հոգւոյդ սրբոյ բարե-
բանութի՟ վայելչական գոհութե՟,
այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն։

digitised by A.R.A.R.@

Գոհաբանութիւն առ Երկինս:

Գոհանամք զքեզ ո՛վ ամենա-
սուրբ Երրորդութի՛ Հայր և Որդի
և Հոգիդ սուրբ, որ ասացեր ա-
րասցուք մարդ ըստ պատկերի մե-
րում, և առեր հող յերկրէ, և
փչմամբ օրհնեալ շնչոյ քո՝ գոյա-
ցուցեր զմարդն Ադամ. վասն որոյ
օրհնեմք զմեծութիւն քո:

Գոհանամք զքեզ տէր, որ ըզ-
մարդն Ադամ զարդարեցեր եօթ-
նարփեան շնորհօք, և երկնաստանն
փառօք. վ՛յ օրհնեմք զշնորհս քո:

Գոհանամք զքեզ տէր, որ ՚ի
Դրախտն Եդեմ եդեր զԱդամ

digitised by A.R.A.R.@

անճառելի խնդութ՟բ, և հիահրաշ ցնծութեամբ • վասն որոյ օրհնեմք զանպարչութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ յետ պատրելոյն Ադամայ՝ յարգելայու անուն օձէն, և արտաքսելոյն 'ի Դրախտէն՝ որով 'ի դժոխս գրաւեցաւ, ազատեցեր • վասն որոյ օրհնեմք զփրկութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ առաքեցեր զանդրանիկն քո՝ զմիածին բանն, որ վասն մերոյ փրկութ՟ե խաչեցաւ, թաղեցաւ, յարեաւ, համբարձաւ • վասն որոյ օրհնեմք զմեծ մարդասիրութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ զսբ մարմին և զսուրբ արիւն նորա՝

digitised by A.R.A.R.@

պարգևեցեր մեզ կերակուր հոգւոյ, և կենդանացուցիչ. վասն որոյ օրհնեմք զպարգևս քո։

Գոհանամք զքէն տէր, որ ըզ մկրտութիւն ուսուցեր 'ի Յորդանանէ և կոչեցեր 'ի խաւարէ 'ի լոյս, և ետուր զորդեգրութիւնն մերին. վասն որոյ օրհնեմք զշնորհաբաշխութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ եօթն խորհուրդ եկեղեցւոյ կազմեցաւ 'ի քոյին շնորհէ, և խոստովանութեամբ թողութի՛ շնորհեցեր. վասն որոյ օրհնեմք զառատապարգև զթութիւնն քո։

Գոհանամք զքէն տէր, որ անձրև և ցօղ տաս երկրի, և բու-

digitised by A.R.A.R.@

տանի հաց և հանդերձ, և ամենայն մնեցեալ կերակուր. վասն որոյ օրհնեմք զբազմաբաշխ ողորմու-թիւնն քո։

Գոհանամք զքէն տէր, որ տաս յաջողութիւն վաստակոց մերոց, և զշնորհս արուեստաւորաց. վասն որոյ օրհնեմք զբազմարուեստ առու-չութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ միշտ քաղցրութեամբ նայիս յարարա-ծըս քո, և որ ըստ օրէ շնորհես զբազմազեղ ողորմութիւն քո. վասն որոյ օրհնեմք զանչափ գը-թութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ մե-ղաւորաց և զղջացելոց թողութի

digitised by A.R.A.R.@

շնորհես, ներես, և ո՛չ եղծանես. վասն որոյ օրհնեմք զանյիշաչարութիւն քո:

Գոհանամք զքէն տէր, որ զեղանակս տարւոյն, ամառն և ձմեռն, աշունն և գարունն՝ արարեր ըստ բնութեան մերում. վասն որոյ օրհնեմք զարարչագործութիւն քո:

Գոհանամք զքէն տէր, որ յայսմ ամի ևս ապրեցուցեր ըզմեզ անվրդով, անահ, և անկասկած. վասն որոյ օրհնեմք զտէրութիւն քո:

Գոհանամք զքէն տէր, որ զմեզ 'ի մահատարաժամէ, և յամենայն սատանահարաց պահեցեր.

digitised by A.R.A.R.@

վասն որոյ օրհնեմք զպաշտպանութիւն քո։

Գոհանամք զքէն տէր, որ 'ի հրկիզութենէ, 'ի հեղեղէ, 'ի շարժէ, 'ի կայծակէ, 'ի խորշակէ, և 'ի սաստկմանէ ապրեցուցեր. վասն որոյ օրհնեմք զապաւինութի քո։

Գոհանամք զքէն տէր, որ օրհնեցեր 'ի լեառն Ձիթենեաց ըզկաթողիկոսունս, զպատրիարգունս, և զեպիսկոպոսունս, որ ճրագ և լոյս եղեն աշխարհի. վասն որոյ օրհնեմք զշնորհաբաշխութի քո։

Գոհանամք զքէն տէր, որ քահանայութի ընծայեցեր Ադամեանս բնութեան՝ որ հրեշտակաց էր կարգ, յաղագս թողութեան

digitised by A.R.A.R.@

յանցանաց մերոց . վասն որոյ օրհ-նեմք զփրկութիւն քո:

Գոհանամք զքէն տէր, որ ըզ սարկաւագունս, զուխտօքս, և զջահընկալս սահմանեցեր . վասն որոյ օրհնեմք զսպասաւորութի քո:

Գոհանամք զքէն տէր, որ ըզ բանաւոր հօտ զժողովուրդս քո՝ ընկալեալ ունիս 'ի ծոց քո, և որպէս զտապանն Նոյեան ազա-տես 'ի հեղձմանէ մերոց . վասն որոյ օրհնեմք զզարմանահրաշ գը-թութիւն քո:

Գոհանամք զքէն տէր, որ զմե-ղուցեալ ժողովուրդն՝ ոչ պատ-ժես 'ի սան քում բարկութեանի, այլ զդարձումն նկատես . վասն

digitised by A.R.A.R.@

որոյ օրհնեմք զերկայնամտութիւն քո։

Եւ վասն մեծի և բարձու ողորմութե քո՝ խոնարհեցո՛ տէր զունկն քո ՚ի ժամուս յայսմիկ և տո՛ւր մեզ յերկնից ՚ի սրբութենէդ՝ շնորհ, ձիր, ողորմութի. քաղցրութիւն, կարողութիւն, մեղաց թողութի. առատութի, փարթամութիւն, աշխարհիս խաղաղութիւն. խնդութիւն, լուսաւորութիւն։ Հաւատ, Յոյս, Սէր. մաքրութիւն, առաքինութիւն, բարեաց լիութիւն. հանդարտութիւն, անդորրութիւն, զգօնութիւն. հաշտութիւն, և օրհնեալ արքայութիւն։

digitised by A.R.A.R.@

Եւ քեզ ընդ որդւոյ · և ընդ սուրբ հոգւոյդ. վայելէ փառք և պատիւ յաւիտեանս, ամէն։

digitised by A.R.A.R.@

Աղօթք սրբոյն Ներսէսի Լամբրոնաց֊ւոյ առ խաչելեալն Քրիստոս։

Ո՜վ քեզ անձնարկեմ աղբիւր ջրոյ կենդանւոյ, և աղաղակեմ՝ թէ ընդէ՞ր է ինձ սրբութեան ծարաւել, երբ դու ես իմ սըրբութի̃. կամ ընդէ՞ր փափաքեմ մաքրութե̃, մինչ դու ես իմ մաքրութիւն։ Այսուհետև ուսեալ՝ եթէ դու ես իմաստութի̃ մեզ յա̃յ տուեալ արդարութիւն և սրբութի̃, քեզ փափագեմ, քեզ առփամ. տո՛ւր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ զըմպելին՝ աղբիւր

digitised by A.R.A.R.@

ջրոյ կենդանւոյ խաղացելոյ 'ի կեանս յաւիտենից։

Ծարաւիմ ըմպել 'ի կրկին վը-տակաց կողիդ , որով և սրբեալ սիրով քո զմայլիմ։ Քաղցնում ուտել զմարմինդ , որով կենդանացեալ անմահ եւ լինիմ։ Փափագեմ ողջագուրել զխոցուած ձեռացդ , որով հասեալ առ քեզ պակիմ։ Տռփամ ակնարկել ընդ-դէմդ , որոյ ապտակաւն 'ի վերայ խոց բժշկիմ։ Վաղվաղակի լո՛ւր ինձ տէր՝ զի նուաղեաց յինէն հոգի իմ։

Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո անձառուդ սիրոյ . տոչորեցայ յառքեզ տռփանացդ՝ ո՛վ վամն իմ

խաչեալ։ Թալկացայ, յորժամ առ քեզ ակնարկեմ՝ ո՛վ վասն իմ սպանեալ։ Եւ աղաղակեմ՝ ցո՛յց ինձ զդէմս քո, զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ․ Երբ եկից երևեցայց քեզ։

Արդ լո՛ւր ինձ, և արբեցո՛ զիս վաղվաղակի քո գխաութե՜դ և սիրով, զի և յինէն՝ որ հաւատամ ի քեզ, բղխեսցեն աղբիւրք ջրոց կենդանութեան։

## ՎԵՐՋ

ԶՈՒՍՌ–Арм.ССР
им. А. Мясникяна

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@